

## ՀԱՄՇԵՆՆԱԿԻՆ



«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

### ՀԱՄՇԵՆԻ ՄԱՍԻՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**Ո**ւսումնասիրությունը, որն ուզում ենք ներկայացնել «Չայն համշենական» թերթի ընթերցողներին, նվիրված է ժամանակակից թուրքիայի մի քանի զավառներում բնակվող բռնի կրոնափոխված համշենահայերի խոսակցական թուրքերենում ցայտոր օգտագործվող հայերեն բառերին, ավելի ճիշտ՝ մանրատեղանուններին: Գիտական այս աշխատության համար հինք են ծառայել Ռիզեի մահանգում հեղինակի՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Լուսինե Սահակյանի**, կատարած բարբառագիտական, ժողովրդագրական բնույթի դաշտային աշխատանքները: Ի դեպ, այդ ուղևորությունների ժամանակ այդ փոքր խմբում էր նաև հմուտ բանասեր և բանահավաք **Սերգեյ Վարդանյանը**, որ գիտական աշխարհին հայտնի է համշենահայերի, մասնավորապես կրոնափոխ համշենահայերի պատմությանը, բարբառին, բանահյուսությանն ու երգարվեստին նվիրված մի շարք արժեքավոր ուսումնասիրություններով:

Ի վերջո, ամեն հայագիտական (և ոչ միայն) աշխատություն, հետազոտություն կամ ուսումնասիրություն նախ և առաջ հայրենիքը փնտրելու և գտնելու փորձ ու ձգտում է, յուրօրինակ մի ճանապարհորդություն: «**Համշենի մանրատեղանունները**» գրքի հեղինակ Լուսինե Սահակյանը անցնելով ժամանակների ու տարածությունների միջոցով, կրոնափոխ համշենահայերի խոսակցական թուրքերենում հատկապես ստիկ փնտրել է այսօր էլ գործածվող հայկական մանրատեղանունները՝ արտասվայրերի, կայերի, ծահիճների, անտառների, բլուրների, գետակների, աղբյուրների, առվակների, հանդերի, ջրհորների ու ձորակների անվանումները, ենթարկել է լեզվագիտական քննության և գիտական աշխարհին ցույց տվել, որ դրանք բուն հայկական են (թեև այդ բառերն իրենց առօրյա խոսքում օգտագործող մահմեդականացված ու թուրքախոս համշենցիներն այդ մասին շատ անգամ չգիտեն), նրանցում առկա են հին և միջին հայերենի արմատներն ու հինքերը, բառակազմական ձևաբանությունը համարեք նաև այն, որ Համշենի բարբառը համարվում է հայերենի ամենից խրթին բարբառներից մեկը: Այս կարծիքին է եղել նաև հայտնի լեզվաբան Հրաչյա Աճառյանը, որը միաժամանակ հավելել է, որ այն «հարուստ է գրաբարի այնպիսի հավաքագրված բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել և նրանում պահպանված գրաբարյան շերտերը վկայում են բարբառի հնագույն լինելու մասին»: Պետք է ասել, որ Համշենի բարբառն ունի իր խոսվածքային յուրահատկությունները, մասնավորապես թուրքիայի կրոնափոխ համշենցիների խոսվածքը, որը ցայտոր համապարփակ կերպով ուսումնասիրված չէ: Հրապարակում եղած հայերեն, առայժմ միակ ընդարձակ աշխատանքը մնում է մահմեդական համշենահայերի խոսվածքին նվիրված Սերգեյ Վարդանյանի 2009թ. լույս ընծայած արժեքավոր մեմորիայում: Հայերենի հնագույն բարբառներից մեկով խոսող հայ ժողովրդի մի հատվածի հիմնարկած բնակավայրերի մեծ մասի անվանումները թուրքական իշխանությունների կողմից հետևողականորեն կամ հիմնովին փոխվել են, կամ էլ աղավաղվել այնպես, որ հայկական ոչ մի նշույլ չի մնացել: Մատնանշելով համապատասխան աղբյուրը, հեղինակը գրում է. «Այդ ընթացքում» (1913թ. դեկտեմբերի 16-ից սկսած) փոխվում են նաև Համշենի նահիյեի գյուղանունները: 1916թ. հունվարի 5-ին եմվեր փաշայի՝ երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական տեղանունների փոփոխման հրամանագրից հետո նույն թվականի հունիսի 3-ին Տրապիզոնի նահանգապետարանը կազմում է 23 էջանոց մի ցուցակ, որում ընդգրկված էին Սասնոնից մինչև Արդվին ընկած տարածաշրջանի գյուղերի հին ու նոր անունները»: Այսուհանդերձ, Լ. Սահակյանի գիրքը գալիս է հաստատելու, որ ի հեճուկս թուրքական իշխանությունների վարած քաղաքականության՝ ջնջելու, երկրի երեսից վերացնելու հայկական ամեն հիշողությունը, Համշենի, Չամլիհենչինի և Արտաշենի գավառների բնակչությունն իր հիշողության ծալքերում անթելված պահել է դարերի խորքից եկած հայկական ժողովրդական տեղանունները:



յուն են բարբառի հնագույն լինելու մասին: Պետք է ասել, որ Համշենի բարբառն ունի իր խոսվածքային յուրահատկությունները, մասնավորապես թուրքիայի կրոնափոխ համշենցիների խոսվածքը, որը ցայտոր համապարփակ կերպով ուսումնասիրված չէ: Հրապարակում եղած հայերեն, առայժմ միակ ընդարձակ աշխատանքը մնում է մահմեդական համշենահայերի խոսվածքին նվիրված Սերգեյ Վարդանյանի 2009թ. լույս ընծայած արժեքավոր մեմորիայում: Հայերենի հնագույն բարբառներից մեկով խոսող հայ ժողովրդի մի հատվածի հիմնարկած բնակավայրերի մեծ մասի անվանումները թուրքական իշխանությունների կողմից հետևողականորեն կամ հիմնովին փոխվել են, կամ էլ աղավաղվել այնպես, որ հայկական ոչ մի նշույլ չի մնացել: Մատնանշելով համապատասխան աղբյուրը, հեղինակը գրում է. «Այդ ընթացքում» (1913թ. դեկտեմբերի 16-ից սկսած) փոխվում են նաև Համշենի նահիյեի գյուղանունները: 1916թ. հունվարի 5-ին եմվեր փաշայի՝ երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական տեղանունների փոփոխման հրամանագրից հետո նույն թվականի հունիսի 3-ին Տրապիզոնի նահանգապետարանը կազմում է 23 էջանոց մի ցուցակ, որում ընդգրկված էին Սասնոնից մինչև Արդվին ընկած տարածաշրջանի գյուղերի հին ու նոր անունները»: Այսուհանդերձ, Լ. Սահակյանի գիրքը գալիս է հաստատելու, որ ի հեճուկս թուրքական իշխանությունների վարած քաղաքականության՝ ջնջելու, երկրի երեսից վերացնելու հայկական ամեն հիշողությունը, Համշենի, Չամլիհենչինի և Արտաշենի գավառների բնակչությունն իր հիշողության ծալքերում անթելված պահել է դարերի խորքից եկած հայկական ժողովրդական տեղանունները:

Սալ – կոկված կարծիք քար՝ սալ, Քարափ – տեղանունը կազմվել է քար+ափ բաղադրիչներից, Օցուտ – օծ+ուտ՝ Օծուտ, և այլն: Հեղինակը հետաքրքիր լեզվական փաստեր է գրանցել նաև Չամլիհենչին գավառի Մաքրկա գյուղի բնակիչներից: Օրինակ, տիկին Գյոնուլ Գյուլայը իր թուրքերեն խոսքում օգտագործել է վանք բառն ու հիշատակել հին հայկական գերդաստաններից մի քանիսի անունները՝ Ալեքսի տուն, Անթոնի տուն, Ալեքի թոն, Բողոսի-Պողոսի տուն, Գինուսի տուն, Խաչիկի տուն, Դարբիքի տուն, և այլն, անգամ տվել է իր թերթիկի՝ քեռակնոջ՝ Միրիեի անունը: Ամփոփելով Լուսինե Սահակյանի «**Համշենի մանրատեղանունները**» օրերս լույս տեսած աշխատասիրության մասին մեր խոսքը, նշենք, որ այն ոչ միայն մշակակալի ներդրում է հայ տեղանվանագիտության ու բարբառագիտության մեջ, այլև կարող է լույս սփռել Համշենի պատմության տարատեսակ խնդիրների պարզաբանման վրա: Այնպես որ գրքի հեղինակին հաջողվել է կորստից ու մոռացությունից փրկել Համշենի և առհասարակ Արևմտյան Հայաստանի մի շարք մանրատեղանուններ, որոնք մեր պատմական և մշակութային ժառանգության անբաժան մասն են:

Այստեղ ես կուզեմայի հատուկ նշել, որ գիրքը խմբագրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ճանաչված մտավորական ու խորագիտակ բանասեր, «**Չայն համշենական**» ամսաթերթի գլխավոր խմբագիր **Սերգեյ Վարդանյանը**, շեշտել նրա տասնամյակների վաստակն ու փորձառությունը հատկապես համշենահայ մեր հայրենակիցների պատմության, լեզվի ու մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Շեշտենք նաև, որ գիրքը գրախոսել է կրոնափոխ համշենցիների մասին բարձրարժեք ուսումնասիրությունների հեղինակ, անվանի գիտնական **Ուլե Բլեզինգը**՝ Լեյդենի (Հոլանդիա) համալսարանի դոկտոր, պրոֆեսորը, ինչը խոսում է գրքի անսակարկելի հաջողության մասին:

Վերջում հավելենք, որ **Լուսինե Սահակյանը** ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դոցենտ է և հրատարակել է Հայաստանի պատմական ժողովրդագրությանը, հայկական տեղանուններին և համշենահայերի պատմությանը նվիրված մի շարք գիտական հոդվածներ: Հեղինակն է «**Քարծր Հայքի բարբառը, Սպեր, Դեղջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում**» (Երևան, 2007) և «**Տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական թուրքիայում**» (Մոսկովա, 2011) մենագրությունները: Ղեկավարում է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժինը:

ԳԵՎՈՐԳ ԱՍՏՏՐՅԱՆ  
ԵՊՀ դասախոս



սովխոզներում: Կերակուր էինք ստեղծում պետության համար, մեզ սպանողների համար: Աքսորի դժոխսային օրից մենք այլևս աստված չունենք, ոչ Քրիստոս, ոչ Մուհամմեդ: Մեր Աստվածը ոչ-խարի կտորն է՝ թրիքը: Մեր պահած ոչխարի մսից, կաթից, բորոքից մեզ ոչինչ չէին թողնում, տանում էին...

Այս դժբախտ հայերը աքսորավայրում փորձում են հայկական դպրոց հիմնել, արգելում են: Ով հայերեն էր խոսում, տանջում էին:

Հարցնում են՝ որքա՞ն էիք Բաթումի շրջանից աքսորված հայերը:

- Գիշերը զենք ու բռունցքով խուժեցին մեր տներն ու մեզ տարան: Ոմանք վախից մեռան, հատկապես մանր երեխաները: Վագոն - բանտախցերի մեջ էլ մեռան: Կանայք ծննդաբերում էին մեռած զավակներ: Բայց դե... Բաթումի շրջանից աքսորեցին վեց հազար համալսելի հայերի: Տեղ հասանք հազիվ չորս հազար: Աքսորի սառույցների մեջ էլ մեռանք: Հիմա երեք հազար ենք:

- Հիմա ի՞նչ եք ուզում, եղբայր համալսելիներ,- հարցրի նրանց:

- Ուզում ենք գալ Հայաստանում ապրել,- ասացին նրանք:- Ուզում ենք գալ ձեզ հետ մնալ, էջմիածնի հովանու տակ, հայի դժբախտ Քրիստոսի օրհնությանը: Փրկեցե՛ք մեզ, հայեր...

\*\*\*

Մի ամբողջ շաբաթ այդ մարդիկ մնացին ինձ մոտ՝ մեր տանը: Ես նրանց հետ բախեցի հազար դուռ ու դարպաս՝ նրանք խնդրանքը կատարելու համար: Հարցրի՝ ինչպե՞ս ծագեց ձեր մեջ այդ միտքը՝ Հայաստանում ապրելու ցանկությունը:

- Աքսորավայրում մենք գրեթե անհույս էինք,- ասացին նրանք: - Ե՛հ, ասում էինք, մեր երկիրը, մեր հողն ու տները մեզինքից առանձնահատուկ շնորհ էինք կապրենք՝ կապրենք, թե կմեռենք, թող մեռենք:

Ապրեցինք: Եկավ 1953 թվականը: Լսեցինք, որ Ստալինը մեռել է: Մեռել է, մեռել է, հողը գլխին:

Մեզ հետ Բաթումի շրջաններից չորս-հինգ հարյուր տուն-ընտանիք մահմեդական վրացիների էլ էին քշել, աքսորել: Վրացի էին, մահմեդական, մեր ճակատագրի շեղբայր, նաև խեղճուկրակ:

1956 թվին այդ աքսորական վրացիները մարդ են ուղարկում Մոսկվա՝ Անաստաս Միկոյանի մոտ, թե էսպես-էսպես, մենք մուսուլման վրացի ենք, մենք ուզում ենք վերադառնալ մեր երկիրը՝ Վրաստան:

Գնացին, ետ եկան ուրախ, զվարթ: Նրանց ընդունել է այն ժամանակի Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, հայ Անաստաս Միկոյանը և օգնել: Գնացինք այդ վրացիներին տեսության, հավաքվում էին, որ վերադառնան տուն: Վրացիներն ասացին, լաց եղավ ու ասաց:- Մի տխրեք, ամեն կերպ կօգնեմ ձեզ, որ վերադառնաք ձեր երկիրը:

Միկոյանը վրացի մահմեդականներին օգնում է ամեն ինչով: Նրանք մեծ նպաստ - գումարներ է տալիս, պետության հաշվին, պետության ծախսերով տեղափոխում տուն-տեղով, տանում Վրաստանում տեղավորում իրենց նախկին գյուղերում, իրենց հողի վրա:

Այս իմանալով, մեր աքսորա-

կան համալսելի հայերը հույս են փայփայում՝ գուցե իրենց էլ ետ տան իրենց տեղերը: Նրանք ևս երեք հոգու ուղարկում են Մոսկվա՝ Միկոյանի մոտ, նույն խնդրանքով:

- Տասնհինգ օր Կրեմլի պատերի տակ թափառեցինք, մինչև Միկոյանը մեզ ընդունեց,- պատմում է Մոսկվա գնացածներից Կարաբեքիր-օղլին:- Ընդունեց: Հարցրեց՝ դուք հա՞յ եք: Ըսինք՝ այո, հայ ենք: Ըսավ՝ ինչո՞վ կապացուցեք, որ հայ եք: Ձեր «պաշարտնություն» չի գրած, որ հայ եք, ձեր ազգանունները...

Բացատրեցինք: Հայ ենք՝ մահմեդական հայ:

- Չեմ հավատում,- ասաց Միկոյանը թթված, բարկացած:

- Աշխարհում,- ասացինք,- ոչ մի մարդ չի գտնվի, որ հայ չլինի և ասի, թե հայ եմ:

Միկոյանը մերժեց մեր խնդրանքը, մեզ գրեթե վռնդեց իր պալատից:

Այսպես ընկճված, հուսահատ նրանք վերադառնում են իրենց աքսորավայրը:

Դրանից տասնմեկ տարի հետո ահա այդ հայերից ութ-ինը հոգի եկել են ինձ մոտ՝ Երևան: Նախ եկել են Վրաստան: Գնացել են իրենց գյուղերը տեսել: Այնտեղ վաղուց այլազգիներ են տեղավորված: Գնացել են թիֆլիս:

- Վրաստանի կառավարությունը մեզ սիրով ընդունեց,- ասացին նրանք:- Վրացի ղեկավարներն ասացին՝ Վրաստանի հողում ինչ վայր ուզում եք, ընտրեցեք, մենք այնտեղ ձեզ համար գյուղեր կշինենք, ձեզ կտեղավորենք, միայն ձեր հին գյուղերումը՝ ոչ: Այնտեղ արդեն մարդիկ են ապրում, լավ չի, որ նրանք տեղահանենք:

Այսպես եղավ: Վրաստանի ղեկավարները խելք ունեն: Գիտեն, թե ինչպիսի աշխատավոր է հայը, այն էլ գյուղացին: Ամեն ինչ անում են, որ մեր համալսելիներին պահեն իրենց մոտ:

- Բայց մենք չմնացինք Վրաստանում: Եկանք Հայաստան: Հիմա ասացեք, կարո՞ղ եք մեզ տեղավորել Հայաստանում: Չենք ասում, թե մեզ շքեղ քաղաք տվեք: Ո՛չ: Մենք անասնապահ մարդիկ ենք, մեզ որևէ տեղ հողամաս տվեք և մենք մեր գլխի ճարը կտեսնենք, տուն-տեղ կսեղծենք, կապրենք:

Ես հարցրի՝ դուք Հայաստանում արդյոք չե՞ք մեղվի այն բանից, որ մահմեդական հայ եք:

- Մենք հայ ենք, պրծավ գնաց,- ասացին նրանք:- Մենք մեր երեխաների համար հայկական դպրոցներ կստեղծենք: Մենք երեք հարյուր տարի մեր հայությունը պահել ենք, չենք կորցրել, այսուհետև ևս կպահենք, երեք հարյուր չէ, երեք հազար տարի: Միայն օգնեցեք, որ մենք հեռավոր աշխարհից զանք մեր տուն:

Մենք միասին բարեփոր Բարունակ թողալքանի հետ սկսեցինք մի ծանր ճակատամարտ մղել Ղազախստանում ու Կիրգիզիայում մնացած երեք հազար հայերի փրկության համար: Ասեմ՝ ես հիացած էի այս մահմեդական հայերով: Ազնիվ են, արդարամիտ, մարդասեր, մանավանդ անխոնջ աշխատող, մի կոռեկից մի լավաշ հաց ստեղծող:

Նախ թողալքանի ու Կարաօղլու հետ գնացի Կենտրոն, այն ժամանակվա ղեկավարներից մեկի մոտ: Ես Կենտրոնի անդամ էի ու հավատացած, որ խոսքս չի մերժվի:

Կենտրոնի երկրորդ քարտուղարը զարմացավ՝ հայ և մահմե-

դական. խոսեց Կարաբեքիրիմ Օղլու հետ: Չարմացավ, որ այս համալսելիները հրաշալի խոսում է հայերեն, իր բարբառով, իհարկե: Իսկ մի՞թե բարբառը հայերեն չէ: Բարբառը հայերեն է, այն էլ նրա սերուցքը, նրա մեռնը:

- Բայց այդ տեղափոխումը պետականորեն անհնարին է կատարել,- ասաց քարտուղարը:- Կիրգիզիայի ղեկավարները կնեղանան: Երեք հազար, այո՞: Դժվար բան է:

Ես նրան ասացի, թե դուք պետական հուններով մի գործեք այս մարդկանց տուն բերելու համար: Միայն հանձնարարեցե՛ք մի երկու շրջանի, որ նրանք տեղավո-



**Քյազիմ Կարաբեքիրիմովը և Ջեյալ Կարաբեքիրիմովը Երևանում, հայաստանաբնակ համալսելիների հետ, 1984թ.:**

րեն սրանց: Այս մարդկանց կիրառվեցին այստեղ ապրող իրենց համալսելի ազգականները:

Այսպես երկար խոսեցինք: Քարտուղարը մեզ ուղարկեց Աշխատանքի տեղավորման կոմիտե (կարծես այդպես է կոչվում): Թե ինչ ասաց նրա նախագահին, չգիտեմ: Այդ կոմիտեում ևս զարմացան՝ հայ ու մահմեդական: Երկար առանց-տվինք: Զգացի, որ Կոմիտեն վերկից հրաման է ստացել՝ մերժել մեր խնդրանքը, հայի խնդրանքը՝ հայ կառավարությունից: Բայց նախագահը պարզ չասաց, թե մերժվում է ձեր խնդրանքը:

- Իհարկե, անպայման պիտի օգնե՛լ ձեզ,- ասում էր նա:- Օգնել: Լավ եք անում, որ ուզում եք գալ: Այո, այո... Վաղը եկեք:

Այսպես մի շաբաթ գնացինք-եկանք: Նախագահը համալսելիներին ասաց՝ լավ, դուք գնացե՛ք ձեր տեղերը, մենք ձեզ իմաց կտանք, թե երբ գաք:

Ես համալսելիներին տարազանզան վայրեր, թե որտեղ իրենք գյուղ ու տուն կառուցեն, ապրեն: Նրանց շատ դուր եկան Հատիս լեռան փեշերը:

- Այստեղ մենք շատ ոչխար ու կով կպահենք: Սա մեզ հարմար տեղ է:

Ես նրանց ճանապարհեցի Կիրգիզիա՝ իրենց աքսորավայրերը: Հույս տվի: Սակայն ավա՞ղ, իմ ու նրանց գաղափարի, արդար ցանկության վրա ոչ թե ծյուն, այլ՝ խոշորագույն կարկուտ մարդեք: Հերթական այցս Կենտրոն՝ համալսելիների ցավով, ողբերգական եղավ: Կենտրոնում ասացին՝ ձեռք քաշիր այդ մտքից: Մենք չենք կարող այդ հայերին տեղ տալ Հայաստանում: Վերջ:

Ահա այսպես եղավ 26 տարի առաջ: Ոչ մի գիշեր քունս մարդավարի չտարավ: Ցնցվում էի, արթնանում համալսելի հայերի աղաղակից:

- Մեզ անտեր մի թողե՛ք...

**Երկրորդ մերժումը**

Ես այս խոսքը արդեն գրում էի, երբ կարդացի Սերգեյ Վարդանյանի համարձակ ու սրտացավ հոդվածը՝ ներքին սփյուռքի

հայության ցավերի ու տառապանքների մասին: Արդեն գրածս ավարտելու վրա էի, երբ մարտի 29-ին կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագրով հաղորդում լսեցի այն մասին, որ վերականգնվում է Գերմանական Ինքնավար Հանրապետությունը, թե 1941 թվականին Վոլգայի ավազանից բռնությանը աքսորված գերմանացիները վերադառնալու են իրենց բնիկ հայրենի տեղերը: Իսկ նրանք, ինչպես ասացին հաղորդման ժամանակ, երկու միլիոն են:

Այս հուսադրող լուրը իմանալով, ես որոշեցի կիսատ թողած

գործս շարունակել: Որոշեցի նորից առաջ քաշել Բաթումի շրջանի արտաքսված դժբախտ մահմեդական հայերի հարցը: Ես համալսելիների այդ հատվածի մարդկանց հանդիպեցի մի քանի տարի առաջ: Այսպես՝ 1984-ի դեկտեմբերին Սերգեյ Վարդանյանը մեր տուն բերեց երկու համալսելիների:

- Մարմն և աքսորականներ են, Աջարիայից: Համալսելիս հայ մահմեդական հայեր:

Ես փաթաթվեցի երկուսին էլ: - Ա՛խ, զավակներս: Ձեր տունդարձի ճանապարհը չեք մոռացել:

- Երբեք, ասացին նրանք:

Սերգեյը հուզվել է: Ազնվական տղա է՝ պատմաբան, խիզախ: Եվ վերջապես՝ 1989-ի փետրվարի 9-ի «Խորհրդային Հայաստան» թերթում երբ կարդացի նրա ընդարձակ հոդվածը, հայի այդ զավակը աչքիս գնաց մեր մեծերին հասավ: Ինչպիսի՞ ցավ, ազգային ինչպիսի արթնացման խթան: Հարցեր է բարձրացնում, որոնք խեղդված էին մեզանում ամբողջ վաթսուկ-վաթսունհինգ տարի շարունակ:

Անցած երկու-երեք տարին ինձ համար երազելի տարիներ էին և ոչ միայն ինձ համար: Ահեղ սառցաշերտեր են փշրվում: Մենք փորձում ենք ցրել շատ խավար անպեր, որ կուտակվել են մեր ազգային մթնոլորտում: Թեև դանդաղ, բայց և այնպես պարզվում են ստալինիզմի ահեղ ոճիրները, որ թափվեցին մեր ազգի գլխին: Շատ բաների մասին արդեն շատերս, այդ թվում նաև ես, ասել ենք: Հիմա էլ բոլորս պետք է ամենայն գործնական խոսենք այն սուկալի բռնությունների մասին, որ թափվեցին մեր ժողովրդի գլխին, այն մասին, թե ինչպես երեսնական թվականների սկզբներից պետական դահճությանը հարյուր հազարավոր հայեր պոկվեցին իրենց հողից, տնից ու քվեցին դեպի ոչնչացում, դեպի աքսոր: Հայտնի է, որ, ինչպես նաև գրում է Վարդանյանը ասածս թերթում, միայն 1918-1923թթ. ներկայիս Հայաստանի տարածքում հայերի թիվը նվազել է 523 հազարով: Ինչ ձևով էլ ուզում են դատեն, սա կատարյալ

ցեղասպանություն էր: Հիշենք. Հայաստանի Կենտրոնական 1923-ին ահեղ վճիռ կայացրեց՝ թուրքի ձեռքից փախած հայերին արգելվում է Հայաստան վերադառնալ: Հիշենք՝ 1927-ին ՀԽՍՀ կառավարությունը որոշում է հանրապետության բնակչության մի մասին «Նրա սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ-ի ազատ հողային ֆոնդերում տեղավորել»: Սա կատարյալ աղետ էր: Հիշում եմ՝ տասնյակ հազարավոր գաղթական դժբախտ հայերին քշեցին դեպի իրուսիս: Նրանք ողբալով գնացին ու... այլևս, շատ քչերի բացառությամբ, չվերադարձան տուն, կորան, գնացին... Հապա 1949-ի ոճրագործությունը: Դրա մասին գրել են:

Սերգեյ Վարդանյանը նաև հիշատակում է, թե միայն 1970-84 թվականներին, տնտեսական, նյութական, բարոյական ու էլի այլ կարիքներից ու հալածանքներից ստիպված, մեր փոքրածավալ հայրենի հանրապետությունից ԽՍՀՄ տարբեր կողմեր են գաղթել 161 հազար հոգի: Սա ընդամենը 15 տարում: Աղե՛տ էր: Այո: Հիմա հարցնենք, ասածս 1920 թվականից մինչև 1984-ը հայ ժողովուրդը սրտացավ, ազգային պետականություն ունե՞ր: Ոչ: Չունենք: Ժողովրդի նկատմամբ կա՞ր տարրական հոգատարություն: Չկար:

Հիշեցնեմ նաև այն, որ Դրիմից, Հյուսիսային Կովկասից, Ադրբ. ԽՍՀ-ից (հատկապես Նախիջևանի ԻԽՍՀ-ից) ավելի քան 200 հազար բնիկ հայեր արտաքսվեցին:

Գնացին: Գնացին կորա՞ն... Հիմա հարցնենք՝ արդյոք, արտաքսվածներից ցանկացողներ եղա՞ն վերադառնալու իրենց ծննդյան տեղերը: Եղան, այո և շատ: Սակայն պետական բյուրոկրատիան թույլ չտվեց: Ամեն փշածածկ ղեկավար դարձել էր ժողովրդի տերը: Ոչ, ի՞նչ են ասում, դարձել էր ժողովրդի դահիճը:

Էլի օրինակ բերեմ: 1966-ին հինգ-վեց ջահել տղաներ եկան Երևան՝ ինձ մոտ: - Մենք,- ներկայացան նրանք,- եկել ենք Բաքվից ոչ հեռու, ծովափին մոր ստեղծված Սումգայիթ քաղաքից: Այդ քաղաքում հիմա տասնութ հազարից ավելի հայեր ենք: Բոլորս ջահել ընտանիքներ ենք: Մեր՝ Սումգայիթի հայերին միջին տարիքը 27 է: Մեզանից գրեթե բոլորը ծառայել են բանակում: Ղարաբաղից ենք, Շամխուրից, Ադրբեջանի հայկական էլի այլ շրջաններից: Մենք բոլորս Սումգայիթում կամ շինարար ենք, կամ մեխանիկ, բանվոր, արհեստավոր: Եկել ենք խնդրելու Հայաստանի կառավարությանը, որ մեզ տեղ տա, տեղավորվենք այստեղ: Խնդրում ենք...

- Ինչո՞ւ,- հարցրի:- Վա՛տ եք ապրում Սումգայիթում:

- Պարզապես դժոխքի մեջ ենք,- պատասխանեցին նրանք: - Հացի-թացի կարիք չունենք: Նաև լավ բնակարաններ ունենք: Աշխատում ենք, վաստակում: Բայց դա ասելի չի, մեր կերած հացը հարամ է: Մենք կյանք չունենք Սումգայիթում: Չանազան տեղերից Սումգայիթ եկած աղքեղացիները մեզ հալածում են, անպատվում են միայն նրա համար, որ հայ ենք: Բնակարանի մեր հարևան արքեպիսկոպոսը մեզ վրա գոռում են:- Հեռացե՛ք, գյավուր հայեր, աստիճանները մուրտառում եք ձեր քրիստոնյա ոտքերով, հարամում եք մեր հավատը, մեր Դուրանը:- Աղքեղացի-**Շարունակությունը՝ 4-րդ էջում:**

← ցիները մեր զավակներին ծնունդ, շարունակ են, մեր կանանց անպատվում: Դանակով, կացնով սպառնում են մեզ: Ամիս չի լինի, որ նրանք մեզինց մարդ չսպանեն: Մենք օր ու արև չունենք Սուևզայիում: Աստու սիրուն, փրկեցեք մեզ:

Այսպես նրանք ներկայացրին իրենց վիճակը:

Նրանք խնդրեցին Սուևզայի-թի ողջ հայության անունից իրենց Հայաստանում մի պատահիկ չոր, քարոտ հող տալ, ասելով, թե իրենք այդ հողում իրենց ծնեքով տներ կշինեն, կապեն:

Հարցրի՝ իսկ ինչու՞ չեք ցանկանում վերադառնալ Ղարաբաղ կամ ասենք՝ Շամխոր:

- Ղարաբաղում ու Շամխորում հայերի վիճակը ևս ծանր է: Հայերն այդ հայկական գավառներից հեռանում են խմբերով: Նրանք ևս հալածված են...

Ես նրանց տարա Արմավիրի շրջանը, ցույց տվի Կոտայքի վերևներում եղած անմարդաբնակ սարերը, լեռնալանջերը, ուր նախկինում բնակավայրեր են եղել: Կմնա՞ք այստեղ:

- Կմնանք,- համախուճ պատասխանեցին նրանք: - Հարմար է: Միայն այստեղ մեզ հող տվեք, մեր փողով շինանյութ տվեք՝ ցեմենտ ու փայտ, իսկ քար այստեղ շատ կա: Տվեք և ինքներս մեր ծնեքով տուն կշինենք, հողը կկենդանացնենք:

Երեք օր շարունակ ես դռները ընկա այս դժբախտների հետ՝ էլ Կենտկոմ, էլ Մինիստրների խորհուրդ, Գերագույն խորհուրդ: Ամեն տեղ մեր աղերսանքին սառցեղեն պատասխան դեմ արին:

- Չենք կարող ձեզ ընդունել: Ի՞նչ է, Սուևզայիոք տվե՞տակա՞նք քաղաք չէ: Ի՞նչ է, դուք դե՞մ եք եղբայրությունը:

Այսպես եղավ, կրկին՝ 1966-ին: Եղան նաև ղեկավար մարդիկ, որ ինձ մեղադրեցին նացիոնալիզմի մեջ, հայ-ադրբեջանական եղբայրության արանքը սեպ խրելու մեջ: Իմ վիրավորանքը դարձավ ողբ: Ի՞նչ անեն այս անտեր-անտիրական հայերը: Մեղա՛ Աստուծո՛ւ...

Եվ... երավ 1988-ի Սուևզայի-թի հայերի կոտորածը: Սիրտս արյունոտվում է: Սուևզայիի հայերը կամ սպանվեցին ադրբեջանցի ղեկավարների ու բանդաների ձեռքով, կամ ցրվեցին:

Հիմա նորից վերադառնամ Միջին Ասիա ու Ղազախստան արքայության համալսելի մահմեդական հայերի ճակատագիրը:

1984 թվականի դեկտեմբերն էր: Ջահել բարեկամս՝ Սերգեյ Վարդանյանը, մեր տուն բերեց երկու համալսելի մահմեդական հայերի: Մեկը դպրոցի դիրեկտոր-մանկավարժ էր, ջահել Ջելալ Կարախանյանը, մյուսը անասնապահական ֆերմայի նախկին վարիչ, այդ օրերին արդեն կենսաբանիկ անցած Քյազիմ Կարախանյանը: Սրանց ևս 1944-ին բռնությանը արքայել են Ղազախստան:

- Այդ սև օրը ես հիշում եմ,- իր մայրենի հայոց բարբառով ասաց Քյազիմ Կարախանյանը:- Արդեն երեխատեր մարդ էի: Չեկայի գործ ներխուժեց Աջարիայի մեր գյուղը... Մեզ տակավի տանջանքներով քշեցին Ղազախստան:

Երկուսն էլ պատմեցին, որ իրենք բնիկ էին իրենց հայրենիքում՝ Կոնյա, Ավգիա, Սար գյուղերում: Իրենց պապերին, ինչպես ասել եմ, 300 տարի առաջ են թուրք սուլթանները բռնությանը կրոնափոխ արել: Ասացին այ-

րում են Ղազախստանի Չիմքենդի մարզում:

- Մեզ 1944-ին տարան ու նետեցին մի ամառի վայր, անունը Չիրկին,- հիշեց Քյազիմը:- Մենք մեր ծնեքով մեզ համար տներ շինեցինք Չիրկինում, տուն-տեղ դրինք, սկսեցինք անասուն պահել՝ տնտեսության ոչխարն ու տավարը: Չիրկինում մեզ չթողին հայկական դպրոց բաց անել: Ռուսական ստեղծեցին:



Ղազախստան, Չիրկին գյուղի համալսելիներ, 1984թ.:

Ես ու Ջելալն ասացին, թե իրենք Չիրկինում 57 ընտանիք են: Բոլորի աչքը տուն դառնալու ճանապարհին է: Տուն, այսինքն՝ Հայաստան:

- Աջարիայից վեց հազար մահմեդական հայ արքայք Ստալինը: Հիմա՝ քառասունհինգ տարի հետո, Կիրգիզիայում ու Ղազախստանում նրանցից մնացել է ընդամենը երեք հազար... Օգնեցեք: Փրկեցեք մեզ...

Ես սկսեցի նորից դռները ընկնել այս մարդկանց օգնելու համար: Սկզբում խոստանում էին օգնել: Հատուկ նամակ գրեցի Մինիստրների խորհրդին: Ասացին՝ կօգնենք:

Չիրկինի երեխաները ինձ նամակ գրեցին ռուսերեն, իհարկե:

- «Հարգելի Սերո Երկուրախի: Մենք՝ Չիմքենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկին գյուղի աշակերտներս, դիմում ենք ձեզ հետևյալ խնդրանքով: Մեր համայնքը կազմված է 57 ընտանիքից: Նրանք բոլորը հայ մուսուլմաններ են, Կարախանյան-օղլի նշանավոր տոհմից... Մենք որոշել ենք մեր բախտը կապել հայրենի Հայաստանի կետ, ապրել մեր նախնիների հողի վրա...»:

Դպրոցը լիքամայ է, ասացի՝ ռուսական: Հայերեն ոչ մի ժամ չի դասավանդվում: Նամակը ստորագրել են 68 երեխա, 9՝ առաջին, 10՝ երկրորդ, 8՝ ութերորդ դասարանցի: Երեխաների մեծ մասի ազգանունները Կարախանյանն է, կան նաև Ռահման-օղլի Ռուստամ, Թաթար-օղլի Մահմեդ, Չուխար-օղլի Իբրահիմ, Մուսաևա Էլմիրա ...

Այն դաժան բախտ: Հայ երեխաներ, հայեր արքայված, անուններն ու ազգանունները՝ թուրքի ...

- Մի տարակուսեք,- ասաց դպրոցի տնօրեն Ջելալը:- Մեր երեխաները բոլորը հայ են, իրենց գտարյուն հայ են համարում: Մեր երեխաները ուզում են փրկվել...

Ջելալն ինձ նվիրեց իրենց դպրոցի աշակերտների խմբային լուսանկարը: Եկեք, նայեք, մարդիկ, ի՞նչ սքանչելի երեխաներ են հայկական բնորոշ երևույթներ, գեղեցիկ, խելոք, սիրուն ... Նայես, կասես Բջնիկ կամ Մարալիկի հայ երեխաների լուսանկար է սա ...

Ջելալն ու Քյազիմն ինձ տվին իրենց գյուղացիների, ընտանիք-

ների համախուսական խնդրանքը՝ մեծահասակների 57 ստորագրություն: - «Ուզում ենք ապրել մեր նախնիների հողում, - գրում են նրանք, - մեզ անհանգստացնում է մեր զավակների ու թոռների ճակատագիրը»:

Ասացի՝ այս խնդրագրի տակ ստորագրել են գյուղի բոլոր 57 ընտանիքների ավագները: Ես այս նամակներն ու ստորագրություններն օրինակեցի ու իմ՝ դե-

նրանց ու Սերգեյին վերցրի ու մեկնեցի Բաղրամյան: Նաև համարձակ եմ գնում, այդ շրջանի կուսաշրջանի առաջին քարտուղարն է հին բարեկամիս՝ Վահրամ Մինասյանի որդին, ազնվական Հենրիկը: Նա անպայման կընդառաջի մեզ:

Եվ ահա նոր շրջանի նոր շրջկոմում եմ: Մարդ չկա: Մտանք միլիցիայի բաժանմունք: Մի կապիտան ընդառաջեց ինձ:

Գնացինք Տավրիկ: Արաքսի աջ ափին է: Դեկտեմբերի սկիզբն է, բայց ծյուն չկա: Չախ կողմից Արարատ լեռն է, դիմացից Արտեմիսը, ապա՝ Հայկական պար շրջան: Հյուսիս ուղադիր նայում են լեռներին, դաշտին, որի մեծագույն մասը կիսաանապատ է: Ես նրանց հայացքներում մի գարնանալի ցավ եմ տեսնում՝ կարոտի ցավ դեպի իրենց հողն ու երկինքը: Հարցրի՞մ՝ ո՞ր կողմն են Բաթումի իրենց հայրենի գյուղերը: Ցույց տվի:

- Մո՞տ է:

- Դեռ ոչ, - ասացի: - Շիրակով-Ղուկասյան, այնտեղից հեռու չեն ծովը, ձեր լեռները:

Քյազիմը ձեռքը հանեց պատուհանից, երկար պահեց: Քամի էր:

- Ես քամին ոնց որ մեր գյուղի քամին լինի: Հարազատ է ...

Կապիտանն ասաց, թե տեղ հասանք: Լավ ասֆալտած խճուղու ճախ կողմին քսան-քսան-հինգ նոր կառուցված շենքեր երևացին: Կանգ առանք, դուրս եկանք մեքենայից: Երկու համալսելիները կլանվեցին այստեղի օդով, դաշտով, մեզինց աջ երևացող Արագածով, որի հարավահայաց փեշերին թախինի շրջանն է:

Նոր գյուղի նոր տները դատարկ են: Տակավին մարդ չի ապրում այնտեղ: Տղաները հարցրին՝ Արաքսը մոտիկ է: Մոտիկ է:

- Չուկ կա՞ մեջը,- հարցրեց Ջելալը:- Լոքո: Լսել ենք դրա համբավը: Տները տուֆից են: Լիովին պատրաստ բնակության: Շենքերը մեկ-երկու հարկանի են, երկու մուտքով, երկու ընտանիքի համար: Մենք մտա՞նք գրեթե բոլոր շենքերը: Մենակները ծեփած, ներկված են, դուռ-պատուհանները՝ ևս: Խոհանոցն ու լողարանները պատրաստ են, միայն ջուր չկա:

- Ջուր կլինի շուտով, - պարզեց կապիտանը: - Նաև էլեկտրական հոսանք կլինի, գազ կլինի: Սկսեցինք պտտվել նորակառույց գյուղում, Ջելալն ու Քյազիմը կռացան հող վերցրին, հոտտեցին, նույնիսկ տարան դեպի բերանները, համը տեսան: Ես հուզվեցի՝ այս մարդիկ հողի մարդիկ են, հասկանում են հողի լեզուն, գիտեն նրա համի գորությունը՝ ինչ բերքեր կտան: Ես նկատեցի, որ նրանք հավանեցին թե հողը, թե տեղանքը: Փառք Աստուծո՛ւ:

Մի երկու ժամի չափ մնացինք Տավրիկ նոր ավանում: Ի վերջո, համալսելիներն ասացին՝ այստեղ մեզ համար հարմար է:

Վերադարձանք երևան: Նույն օրվա երեկոյան Կարախանյանը մոկները Տաշքենդ թռչող օդանավով մեկնեցին: Հրաժեշտին ինձ ասացին.

- Բաղրամյանի այդ գյուղը հավանեցինք: Կզանք: Աստիճանաբար կզանք՝ տասը-տասնմեկ ընտանիքով: Մնաք բարյակ ...

Նրանք հետները Բաղրամյանից հողանմուշ տարան:

Կրկին՝ այս մահմեդական հայերը մեզ հետ խոսում էին հա-

յերեն, իրենց՝ համալսելի բարբառով:

Դեկտեմբերի 18-ին նրանցից հեռագիր ստացա: «Տեղ ենք հասել ապահով: Ողջույններով՝ Ջելալ»:

Մի երեկո Հենրիկ Մինասյանը եկավ ինձ մոտ:

- Լսել եմ՝ ուզում ես համալսելիները բերել մեր շրջանում տեղավորելու: Ուրախ եմ: Պատրաստ ենք ընդունելու, թեկուզ երեք հարյուր ընտանիք:

Չրուցեցինք երկար: Իրոք, շրջկոմի առաջին քարտուղարը ուրախ էր: Նոր շրջան է, աշխատող ձեռքի խիստ կարիք կա:

- Այնքան ամառի հողեր ունենք մեր շրջանում,- ասաց նա,- որ երեսուն հազար մարդ կարելի է տեղավորել, ապահովել հողով: Թող գան: Ողջ շրջանով սպասում ենք:

Ավելի համարձակ եմ բախում պետական իշխանությունների դռները՝ դրանք համալսելիների համար բաց անելու նպատակով: Սակայն զգում եմ, որ այս դռները տհաճությամբ են բացվում իմ առջև, պետական չինովնիկ այրերի մեջ առնություն են նկատում:

- Կօզնենք, կօզնենք,- ասում են նրանք: Նկատում են, որ կեղծում են:

Համալսելիներից նամակ ստացա, հղված դեկտեմբերի 26-ին: Չորսի մեջ մի շատ հուզիչ լուսանկար կա: Չիրկինում մեր մահմեդական հայերի հարսանիք է: Հարսը զարդարված է բնորոշ հայկական ճերմակ գգեստով՝ թրթռում քողով, տղան թուխ բեղեր ունի, առատ մազախուրձ, կատարյալ հայի կերպար: Մեկը ավանդական գուռնա է նվազում: Մի կին ձեռքերը պարզած պարում է: Մի այլ հարսանքավոր կնոջ գգեստը բնիկ հայկական է՝ Տրապիզոնի տարազ, որ տեսել եմ միայն հին լուսանկարներում:

«Եղբայրական բարևներ... Չիրկինի համալսելիներից: Մեր հայ ժողովրդի, երևանի ու հատկապես ձեր տված ջերմությունը երկար տաք կմնա մեր սրտերում...»,- կարդում եմ նամակում,- «Մեր սիրելի հայ ժողովրդի մասին, Ձեր մասին լավ գիտի մեր Չիրկինում ապրող յուրաքանչյուր համալսելի...»:

Նույն օրը, երբ մենք վերադարձանք, հավաքվեցին մեր գյուղացիք, բոլորը՝ մեծ ու փոքր: Պատմեցինք մեր սիրելի հայրենիքի անսահման բարության մասին՝ դեպի մեզ: Մենք պատմեցինք այն գյուղի մասին, ուր պիտի ապրենք: Մի ամբողջ շաբաթ քննարկեցինք այդ հարցը և, վերջիվերջո, եկանք օգտակար համոզման ու վճռի: Բոլորը միախառնում համաձայնություն տվին այն բանին, որ վերադառնանք ու ապրենք մեր հայրենիքում...

Մեր այստեղի տները վաճառելու պորբեմը մնում է չլուծված... Այնպես որ մեր հայրերի ամբողջ տառապանքն ու քրտինքը կուտակված է այստեղ... Մեր տները շատ լավն են, բարձր զինունեն: Սակայն տեղաբնակ դաժակները, իմանալով, որ մենք, միևնույն է, կհեռանանք այստեղից, արդեն հրաժարվում են մեր տներն առնելուց, թեև նման ցանկություն ունենին առաջներում: Նրանք մտածում են, որ մենք մեր

յերեն, իրենց՝ համալսելի բարբառով:

Դեկտեմբերի 18-ին նրանցից հեռագիր ստացա: «Տեղ ենք հասել ապահով: Ողջույններով՝ Ջելալ»:

Մի երեկո Հենրիկ Մինասյանը եկավ ինձ մոտ:

- Լսել եմ՝ ուզում ես համալսելիները բերել մեր շրջանում տեղավորելու: Ուրախ եմ: Պատրաստ ենք ընդունելու, թեկուզ երեք հարյուր ընտանիք:

Չրուցեցինք երկար: Իրոք, շրջկոմի առաջին քարտուղարը ուրախ էր: Նոր շրջան է, աշխատող ձեռքի խիստ կարիք կա:

- Այնքան ամառի հողեր ունենք մեր շրջանում,- ասաց նա,- որ երեսուն հազար մարդ կարելի է տեղավորել, ապահովել հողով: Թող գան: Ողջ շրջանով սպասում ենք:

Ավելի համարձակ եմ բախում պետական իշխանությունների դռները՝ դրանք համալսելիների համար բաց անելու նպատակով: Սակայն զգում եմ, որ այս դռները տհաճությամբ են բացվում իմ առջև, պետական չինովնիկ այրերի մեջ առնություն են նկատում:

- Կօզնենք, կօզնենք,- ասում են նրանք: Նկատում են, որ կեղծում են:

Համալսելիներից նամակ ստացա, հղված դեկտեմբերի 26-ին: Չորսի մեջ մի շատ հուզիչ լուսանկար կա: Չիրկինում մեր մահմեդական հայերի հարսանիք է: Հարսը զարդարված է բնորոշ հայկական ճերմակ գգեստով՝ թրթռում քողով, տղան թուխ բեղեր ունի, առատ մազախուրձ, կատարյալ հայի կերպար: Մեկը ավանդական գուռնա է նվազում: Մի կին ձեռքերը պարզած պարում է: Մի այլ հարսանքավոր կնոջ գգեստը բնիկ հայկական է՝ Տրապիզոնի տարազ, որ տեսել եմ միայն հին լուսանկարներում:

«Եղբայրական բարևներ... Չիրկինի համալսելիներից: Մեր հայ ժողովրդի, երևանի ու հատկապես ձեր տված ջերմությունը երկար տաք կմնա մեր սրտերում...»,- կարդում եմ նամակում,- «Մեր սիրելի հայ ժողովրդի մասին, Ձեր մասին լավ գիտի մեր Չիրկինում ապրող յուրաքանչյուր համալսելի...»:

Նույն օրը, երբ մենք վերադարձանք, հավաքվեցին մեր գյուղացիք, բոլորը՝ մեծ ու փոքր: Պատմեցինք մեր սիրելի հայրենիքի անսահման բարության մասին՝ դեպի մեզ: Մենք պատմեցինք այն գյուղի մասին, ուր պիտի ապրենք: Մի ամբողջ շաբաթ քննարկեցինք այդ հարցը և, վերջիվերջո, եկանք օգտակար համոզման ու վճռի: Բոլորը միախառնում համաձայնություն տվին այն բանին, որ վերադառնանք ու ապրենք մեր հայրենիքում...

Մեր այստեղի տները վաճառելու պորբեմը մնում է չլուծված... Այնպես որ մեր հայրերի ամբողջ տառապանքն ու քրտինքը կուտակված է այստեղ... Մեր տները շատ լավն են, բարձր զինունեն: Սակայն տեղաբնակ դաժակները, իմանալով, որ մենք, միևնույն է, կհեռանանք այստեղից, արդեն հրաժարվում են մեր տներն առնելուց, թեև նման ցանկություն ունենին առաջներում: Նրանք մտածում են, որ մենք մեր

← տները հենց այդպես կորցնենք իրենց: Իսկ մեր տները մի-մի պալատ են:

Թանկագին Սերո Խանգաղյան, Յենց որ այդ հարցը վճռվի, հաջորդ օրը բոլոր համայնքները կլինեն իրենց հայրենիքում: Վերջապես կկատարվի մեր ժողովրդի երազանքը: Բոլոր համայնքները խոսք տվին, որ իրենք ամեն ինչ կանեն Հայաստանում՝ համուն մեր հայրենիքի բարգավաճման...»:

Ես նորից Կենտրոնում եմ, Մինիստրների խորհրդում: Նույնիսկ Կենտրոնի առաջին բարտուղարին (Նախկինին) դիմեցի:  
- Էլի՞, տրտմեց նա: Ի՞նչ համայնքի հայ, ի՞նչ բան, էն էլ մահմեդական: Լավ, մի քիչ սպասիր, կմտածենք:

Ես համայնքի եռանդուն հայրենասեր վուվա Յայյանին ուղարկեցի Ղազախստան: Գնա իմացիր մերոնց վիճակը, ի՞նչ դժվարություններ ունեն, ի՞նչ են ուզում:

Յայյանը գնաց ու վերադարձավ:  
- Բոլորը, - ասաց, - պատրաստ են գալու Հայաստան: Սակայն այդ մարդիկ արյուն քրտինքով տուն են շինել, այգի ստեղծել, անասուն ունեն: Ի՞նչ անեն: Իրենց ամբողջ ունեցվածքը այդ տներն են: Ուզում են ծախսեն:

Գնող չկա: Տեղական իշխանությունները դաժանեցին ասել են՝ փող չտաք այդ տներն առնելու, շուտով հայերը կգնան ու նրանց տներն ու հողը, կայքը ձեզ կմնա:

Համայնքները խնդրում են Հայաստանի կառավարությանը, որպեսզի իրենց գյուղը, իրենց 57 տները մեր կառավարությունը գնի կամ միջնորդի՝ Ղազախստանի կառավարությանը գնի և արժեքը վճարի տանտերերին: Այս խնդրանքով էլ դիմեցի մեր վերահասին: Ապարդյուն: Ասում են՝ ինչն էլ վերադարձեք եղբայրական Ղազախստանին:

Համայնքներն ինձ գրեցին, թե իրենց յուրաքանչյուր տան, տնտեսության արժեքը առնվազն 75-80 հազար է, սակայն իրենք պատրաստ են բավարարվելու 10 հազարով: Թող մեզ տան այդ չնչին գումարը, որ գոնե տեղափոխվելու, ճանապարհի հաց ու թացի միջոց ունենանք:

Գրավոր դիմեցի մեր իշխանություններին՝ համայնքներին տվեք 570 հազար ռուբլի:

Մերժեցին: Գնացի ակադեմիա: Գիտեմ, նրանց տարեկան բյուջեն 35 միլիոն 500 հազար ռուբլի է: Աղաչեցի՝ կես միլիոնը գոհեցեք մեր դժբախտ հայերին: Մերժեցին խնդրանքս:

Իսկ Ղազախստանից մեր դժբախտները շտապեցնում են: Օգնեցե՞ք: Սոսկալի է: Ախր աքսորված, տառապած մարդիկ փրկություն են որոնում: Չկա ու չկա: Այդ մահմեդական հայերի որդեգրումը մեր Հայաստանի կողմից աստվածային գործ կլինի:

Ի վերջո, մեր կառավարությանը նախկին նախագահին ինձ անկեղծ ասաց.

- Գիտես, բարեկամս, կառավարությունը ամեն ինչ կանի, որպեսզի այդ հայերին բերի մեզ մոտ: Դրա ծախսերը չենք բան են մեզ համար: Սակայն... Սակայն մեր Կենտրոնի առաջին քարտուղարը (Նախկինին) դեմ է այդ բանին: Քանի անգամ խնդրել եմ, մերժել է:

Մինչ այս, մինչ այն, լսեցի, որ Բաղրամյանի այն նոր գյուղում, որը պահում էինք համայնքների համար, Կենտրոնի կարգադրությամբ հապշտապ բնակեցվել է, նաև՝ ոչ հայերով: Այս մասին լուր տվի Չիրկինի հայերին: Նրանք գրեցին՝ ոչինչ, մի այլ տեղ կբնակվեն:

Դարձյալ գնացի Կենտրոնի առաջին քարտուղարի մոտ: Յենց որ ինձ տեսավ, գոչեց.

- Եթե մահմեդական հայերի հարցով ես եկել, չեմ ընդունի: Այդ հայերին ես չեմ թույլ տա, որ գան Հայաստանում բնակվեն: Չեմ թույլ տա: Վերջ...  
Երկինքը փլվեց իմ գլխին: Տուն եկա գազազած: Տե՛ր Աստված, այս ի՞նչ է կատարվում...  
Այսպես եղավ: Հուսահատվե՞մք: Ո՛չ:

Այս ամենը գրելով, պատմելով, ես այսօր՝ վերակառուցման այս օրերին, դիմում եմ մեր կառավարությանը: Հատուկ միջոցներ ստեղծել Միջին Ասիայում ու Ղազախստանում հայրենի հողի կարոտով ապրող երեք հազար հայ մահմեդական համայնքներին անհապաղ հայրենիք վերադարձնելու նպատակով: 2<sup>ե</sup> որ նրանք ահեղ ու մարդակեր Ստալինի գոհերն են: Պետք է փրկել նրանց:  
Սպասում եմ:

«Հայրենիքի ծայն», 1989թ., մայիսի 3, 10:

# Նոր բանաստեղծություն



Այս ապրիլին՝ Երևանում անցկացվող Գրողների համահայկական 6-րդ համաժողովի օրերին, հանդիպեցի իրանահայ բանաստեղծ Ալմինին: Նա ինձ տվեց Թեհրանում հրատարակվող «Ալիք» թերթի ապրիլի 10-ի համարը, որտեղ տպագրված էր նրա «Համայնքի» բանաստեղծությունը: Ընթերցելուց հետո խնդրեցի, որ պատմի, թե որտեղ է հանդիպել այդ չքմաղ էսկիին՝ ավանդական գլխաշորով կապուտաշյա համայնքի աղջկան: Նա ասաց, որ ինքը ոգեշնչվել է, տեսնելով համայնքի դեռատի աղջկա հանրահայտ լուսանկարը: Տպագրելով այդ լուսանկարը, որում պատկերված է Ռիզեի մահանգի համայնքից հատուկ գլխաշորով աղջնակը, պիտի ասեմ, որ ցավոք, սև-սպիտակ տպագրությամբ հնարավոր չէ արտահայտել պատկերի ողջ հմայքը: Մանրամասնեմ, որ բանաստեղծ Ալմինը ծնվել է 1952թ. Թեհրանում, շուրջ երեքուկես տասնամյակ հայոց լեզու և գրականություն է դասավանդել քաղաքի տարբեր հայկական դպրոցներում: Այժմ անցել է վաստակած հանգստի: Նրա բանաստեղծությունների առաջին գիրքը Թեհրանում լույս է տեսել 1976թ. «Տրոփյուններ» վերնագրով, որին հաջորդել են «Լուսաբարություն» (1978), «Սիրանյութ» (1981), «Եւ եղել լոյս» (1991), «Իմ մանկան գիրքը» (2001), «Աստղացույթ» (2004), «Դուք ինձ կհիշեք» (2007) և «Անձանոթներիս» (2009) ժողովածուները:

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# Չամչե՛նուհի՛ն

Կարաբալա՛, ինձ արնագոյն ծաղիկ տուր, Որ նւիրեմ համչե՛նուհու՛ն քնքշագին, Նրա աստղոտ աչքերից սէր է կաթում. Արեւութիւն՝ անուշ դէմքից թաւշայի՛ն:

Ալ շրթներին շող ու շաղ կայ արեւի Ու իր գլխին՝ համչե՛նական գլխաշոր, Թէ նրբագեղ իր թելերը երկարի՛ Կը ծնի մի երագային պար շորո՛ր...

Ծաղիկների ծիծաղ կայ քո զամբիւղում, Կարաբալա՛, բարեկամ իմ թանկագին, Դու եղե՛լ ես Համչե՛նի մի հին գիւղում, Ուր տխրուրախ մի ծաղիկ կայ կաթոգին:

Համչե՛նուհի՛, իմ նոր գտած հայ աղջիկ, Լուսամարմին մի աստղացույթ հասած ինձ, Մեր պատմութեան վարդամատն իմ Աստղիկ՝ Ամենասուրբ աստածային տաճարի՛ց...

Համչե՛ն աղջիկ, իմ կապուտաշյա զանձ թաքուն, Արմատով՝ հայ, հոգեհիւթով՝ հայաբոյր, Քո պատկերից ելնում է մի շունչ տաքուկ, Որ գերում է հոգիս, ինչպէս սէր մաքո՛ր...

Գլխիդ կապած ծաղկանկար փուշից Յառնում է մեղմ ծաղկաստանի անուշ բոյր, Հայաստանի աղջիկ ես դու՛, Համչե՛նի՛ց, Իմ անարատ երգի աղբիւր՝ քնքուշ քո՛յր...

Կարաբալա՛, թող ջոկեմ ես մի ալ վարդ, Որ դառնայ գարդ՝ մերը մագերիմ մետաքս, Համչե՛նուհի՛, իմ վարդաբոյր ծաղկազարդ, Եթէ կայ սէր մեր աշխարհում, Լոկ այս է...

Կարաբալա՛, իմ թանկագին բարեկամ, Հմայած եմ համչե՛նուհու՛ն աչքերից, Այդ ծաղկի դէմ ծունկի կը գամ շա՛տ անգամ, Անգամ եթէ այդ Սե՛ծ Սէրը մերժե՛ ինձ...

25.02.2012, Թեհրան

1. Ժամանակին Երեւանի Աբովյան փողոցում ծաղկավաճառ ծերունի (ծանոթ.՝ «Ալիքի»):

# Հայերի թիվն Աբխազիայում

«Ձայն համայնականի» ընթերցողները հաճախ են ինձ հարցնում, թե այժմ որքա՞ն հայ է բնակվում Աբխազիայում: Ավագ և միջին սերնդի շատ հայաստանցիներ, ովքեր առիթ են ունեցել հանգստանալու գեղատեսիլ Աբխազիայում, տպավորվում էին, որ այնտեղ զգալի էր հայերի թիվը: Հայերի կարելի էր հանդիպել ամենուր, կային բազմաթիվ հայկական գյուղեր ու հայկական դպրոցներ և այլն: Հայտնի է, որ վրաց-աբխազական պատերազմի օրերին ծայր առավ հայերի արտագաղթը դեպի Ռուսաստան և այլ երկրներ:  
Իսկ որքա՞ն է հայերի թիվն այսօր՝

վրաց-աբխազական պատերազմից շուրջ երկու տասնամյակ անց: Համեմատության համար մի հայացք գցենք անցյալին. 8,6 հազար քառ. կմ տարածք ունեցող Աբխազիայում 1959թ. բնակվում էր 405 հազար մարդ, որից վրացիները 158,2 հազար էին, ռուսները՝ 86,7 հազար, հայերը՝ 64,4 հազար, աբխազները՝ 61,2 հազար: 1969թ. բնակվում էր 492 (այլ տվյալներով 481) հազար մարդ, որից վրացիները կազմում էին 41 տոկոս, ռուսները՝ 19,1, աբխազները՝ 15,9, հայերը՝ 15,4 և այլն: Այսինքն, հայերի թիվը շուրջ 74 հազար էր: Տասը տարի անց հայերի թիվը կրկին այդքան էր: Պիտի

հատուկ ընդգծեմ, որ տեղացի հայերի շրջանում տարածված էր այն տեսակետը, որ նրանց թիվը վիճակագիրները միտումնավոր նվազեցնում էին:  
24 տարի անց՝ 2003-ին, Աբխազիայում մնացել էր 44,869 հայ:  
Գանք մեր օրերը: Ըստ Աբխազիայի Վիճակագրական վարչության տվյալների 2011թ. երկրի ընդհանուր բնակչության թիվը կազմել է 240.705 մարդ, որից 122.069 աբխազ, 43.166 վրացի, 41.864 հայ, 22.077 ռուս, 3201 մեգրել, 1320 հույն: Աբխազիայում բնակվում է 91 ազգություն:  
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# Լուրեր Աբխազիայի Գագրա քաղաքի 3-րդ հայկական դպրոցից

## Ապրիլի 24-ի զոհերի ոգեկոչումը դպրոցում

2012 թիվ: Ապրիլի 24: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս ապրիլի 24-ին Գագրայի Խ. Աբովյանի անվան հայկական դպրոցի դահլիճում հավաքվել էին աշակերտներ, ծնողներ, հայ համաքաղաքացիներ, որ միասին հիշեն ու հարգաքննեն տուրք մատուցեն Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:  
Հնչում էր հոգևոր երաժշտություն, դահլիճի էկրանին ցուցադրվում էին դրվագներ Մեծ Եղեռնի մասին, վառվում էին մոմեր, ծաղիկներ էին դրվում Ծիծեռնակաբերդի մե-

ծաղիկ նկարի առջև: Դահլիճում տիրում էր լռություն: Երեխաները շատ հուզիչ արտասանեցին բանաստեղծություններ և երգեցին հայրենասիրական երգեր: Միջոցառումն սկսվեց Տեր Սեդրակ քահանայի կազմավորած 5 հոգուց բաղկացած երգչախմբի ելույթով. առաջին անգամ դպրոցում հնչեց հոգևոր երգը, որը համակեց բոլորին իր մաքրությամբ և անդորրություն բերող տրամադրությամբ:  
**Ֆիզիկայի միջոցառում դպրոցում**  
Ապրիլի 26-ին դպրոցում

ֆիզիկայի տասնօրյակի ամփոփիչ պարապմունքն էր: Միջոցառումն անցկացվեց հենց ֆիզիկայի կաբինետում, որն անցյալ տարի էր վերանախարակվել և կահավորվել դասավանդման արդի պահանջներին համապատասխան, դպրոցի տնօրեն Գ. Տրապիզովյանի նախաձեռնությամբ և ջանքերով:  
Միջոցառումը նվիրված էր Իսահակ Նյուտոնին: Կազմակերպիչներն էին ֆիզիկայի վաստակաշատ ուսուցիչներ Սեդա Քոսյանը և Սիրանուշ Կարապետյանը: Մասնակցում էին բարձր դասարանի աշակերտները:

Աշակերտները պատմեցին ինչպես Իսահակ Նյուտոնի, այնպես էլ Վիկտոր Համբարձումյանի կյանքի ու գործունեության մասին, ցուցադրեցին հետաքրքիր փորձեր, ներկայացրին հունոր նշանավոր ֆիզիկոսների կյանքից: Խոսվեց Նոբելյան մրցանակի նշանակության մասին:  
Վերջում եղավ բեմակազմված ելույթ ինտերգիայի ուժի մասին: Շատ հետաքրքիր և բովանդակալից միջոցառում էր և արժանացավ դպրոցի տնօրենի գովասանքին:  
ԱՄԱԼՅԱ ՎԱՊԻՎՅԱՆ  
Դպրոցի ուսնաավար

ՍԵՐԳԵՅ ՎԱՐՊԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության հնաստիտուտի գիտաշխատող

ՈՐՈՇ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԽՈՓԱՅԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ


Համայնի բարբառի և փայլի խոսվածքով բանասիրական նյութեր գրառելու համար 2011թ. հունիսին և հոկտեմբերին կրկին եղա թուրքիայի Արդվինի նահանգի Խոփա և Բորչկա գավառներում: Մեր հարցասեր ընթերցողներին լրացուցիչ տեղեկացնեն, որ թուրքական քարտեզներում Խոփա ծովափնյա քաղաքը գրվում է Յոփա, այն պարզ պատճառով, որ թուրքերենը չունի «խ» հնչյունը և տառը, իսկ տեղանունը և լազերեն, և՛ հայերեն Խոփա է:

Այս այցելությունների ընթացքում, բանասիրական գրառելիս կրկին իմ ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ ասացողները հաճախ էին «ս» հոդի փոխարեն «գ» ասում, առանց որևէ օրինակաբանության: Նույնը նաև կրկնվում էր «ը» և «է» հոդերի հետ: Այս դեպքում շատ անգամ դժվար էր լինում ընկալել որտեղ է ավարտվում «ը» հնչյունը և սկսվում «է»-ն: Գաղտնավոր «ը» հնչյունը ևս ասացողը կարող էր մեկ «ը» արտասանել, մեկ՝ «է»: Անշուշտ, դա չի նշանակում, որ այս հնչյունները մշտապես են այդպես փոխարկվում և հնչում, շատ անգամ «ը»-ի փոխարինումը «է»-ով շատ հստակ է և դա Խոփայի խոսվածքի առանձնահատկություններից է:

Պետք է արձանագրենք, որ Խոփայի խոսվածքում նշմարվում է Համայնի բարբառին հատուկ քնային (առաջնալեզվային ոչ շրթնայնացած ստորին բարձրացման բաց հնչյուն) «ա» ձայնավորը, որն ընկալվում է հատկապես հետևյալ բաների արտասանության ժամանակ՝ ալի, ադի, աճ, աճան, սասպան, սա, սվալու և այլն:

Նշեն նաև, որ արդալացիների ենթախոսվածքին բնորոշ ընթացումը, նաև այլ յուրահատկություններ երբեմն նկատվում են նրանց հարևանությամբ ապրող ոչ արդալացիների խոսքում: Արդալա գյուղի ենթախոսվածքի հիմնական կրողներն են ոչ միայն Արդալա (այժմ՝ Էշմեթայա), այլև Ջաղրինա (այժմ՝ Գյունեշլի), Անչիօղ (այժմ՝ Փընարլը), նաև Բորչկայի գավառի Մանասբըր (այժմ՝ Յեշիլբոյ) գյուղերի համայնիների մի զգալի մասը, որոնք ծագումով արդալացի են:

Եվս մեկ կարևոր հարցի մասին: Կրոնափոխ համայնիների առնչվածներն ինձ հաճախ են հարցնում, թե ինչպես է, որ Խոփայի և Բորչկայի գավառների համայնիներն առ այսօր պահպանել են մայրենի բարբառը: Պարզաբանեն, որ Խոփա քաղաքի հարևանությամբ գտնվող Մաթրիյալ գյուղը և մի շարք այլ գյուղեր 1878 թվականին մտան Ռուսական կայսրության կազմի մեջ: Դրանք կրկին թուրքիային անցան 1921 թվականին: Ուստի այդ չորս տասնամյակների ընթացքում այդ գյուղերի համայնիները գերեծ են մնացել թուրքերեն խոսելու պարտադրանքից և ազատորեն հաղորդակցվել են Բաթումի և այլ վայրերի հայության հետ: Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ



Հ. Աբջիչեթը (ձախից) և Ս. Վարդանյանը, Երևան, 2008թ.:

այդ գավառները 1921թ. հետո գտնվելով սահմանակից, փակուղային վայրում, մինչև 1990-ական թվականները քիչ առիթներ էին ունենում շփվելու ուրիշների հետ, ուստի լեռնային այդ գյուղերում թուրքերենն օրվա պահանջ չէր, մանավանդ կանանց համար: Երրորդ հանգամանքն այն է, որ գյուղացիները քաղաք քիչ էին գնում և Խոփա քաղաքում շատ քիչ էր համայնիների թիվը: Նրանք քաղաքի հետ իրենց շփումներն անհամետ մեծացրեցին, երբ 1970-ական թվականների վերջին և 1980-ական թվականներին գյուղերի համար կառուցվեցին նոր ճանապարհներ և ակտիվացավ երթուղարձը և շատերը սկսեցին բնակություն հաստատել Խոփա քաղաքում: Չորրորդ, և, գուցե,

մեր օրերում ամենակարևոր հանգամանքն այն է, որ մինչև 1970-1980-ական թվականներն այդ գյուղերը զուրկ էին էլեկտրականությունից և վարում էին նահապետական կյանք: Ճանապարհների կառուցմանը հետևեց էլեկտրականության անցկացումը, որին էլ հաջորդեց հեռուստատեսության մուտքն այդ լեռնաշխարհ: Փաստորեն, միայն 1980-ական թվականների կեսերից են Խոփայի և Բորչկայի գավառների համայնիները հնարավորություն ունեցել հեռուստահաղորդումների միջոցով թուրքերեն սովորել, ծանոթանալ թուրքական մշակույթին (նաև ենթարկվել թուրքական քարոզչությանը): Թուրքերեն մանկական հաղորդումներ և մուլտֆիլմեր դիտելով այսօր համայնի

երեխաները վաղ մանկությունից սովորում են թուրքերեն, որը հաստատուն քայլերով դուրս է մղում նրանց մայրենի բարբառը: Խոփայի խոսվածքի հետագա ճակատագրի մասին 2011թ. հունիսին գրուցում էի մեր ճանապարհորդության ընթացքում մեզ ընկերակցող, ստամբուլաբնակ Հիբմեթ Աբջիչեթի հետ: Նա 1963թ. ծնվել է Խոփայի գավառի Ուլաքուրեզ գյուղում, այնուհետև բնակվել է Մաթրիյալում, բարձրագույն կրթությունը ստացել է Ստամբուլում, որտեղ էլ ֆինանսիստ է աշխատում շինարարական կազմակերպությունում: Նա 2000-ական թթ. սկսել է գրառել և երգել հայերենի գավառի երգերը: 2005-ին թողարկել է «Վոլա» խոսակցարկղ, 2008-ին Երևանում հանդես է եկել համերգով: Այդ թվականից էլ ընկերություն ենք անում և արդեն երկրորդ անգամ էր, որ թուրքիայի Ռիզեի և Արդվինի նահանգներ ճանապարհորդությունների ընթացքում ընտանյոք կամ մենակ ընկերակցում էր մեզ: Նրա հետ Ռիզեի նահանգի Չանլիեմշիկ գավառի Գիթո յալայի «Քոչիթա» հանգրվանատանը հնարավորություն ունեցանք զրուցելու համայնիների բարբառի, նաև գյուղերում դեռևս կենդանավարող հավատալիքների մասին: Բարբառով և գրական թարգմանությամբ ներկայացնում են այդ զրույցներից որոշ հատվածներ, վերնագրված՝ «Մեր լիզվիս մեր մուշին վարել», «Վանցիթ», «Քուրու», «Փերի»:

Յէս Խոփայի Ուլաքուրեզ քաղաքում

աշխարհ եզած իմ: Յէս Մաքարոյլեթանուն իմ: Իմ ունենա՞ծ օխքե՞ համաշեցու դաղաքե՞ արաչ համաշեցնակ խաբրե՞ գունի, հեղե՞վ՛ մաքթաքն ի վա էթուշին օխքին, զամաց-զամաց թուրքչա սօրվէ՞ գունի: Յէս ալ թուրքչան հինգ-վեց դարազանան հեղե՞վ, շաղն ալ մաքթաքին սօրվէ՞ցա, թեր ալ սօրվի գուն: Մէք մեր լիզուխ համաշեցնակ գափիք: Հեղե՞վ իմացաք թա, մեր լիզուս էրմե՞նքսանուն լիզուցօվէ մեմենա: Ալի իմացաք թա, Աբհազիսին ու Ռուսիաին մէջն ալ համաշեցի գօն, աներ ալ մեր լիզուս խաբրի գուն, ամա մէք մուսլիման իք, աներ՝ խրիսթյան:

Արաչ մէք էրմենի մե՞ դեսունսլ չէլ գաաքի, թա լիզուս անօց լիզուին լեմանի գու թա,

Մեր լիզվիս մերմուշին վարել

դէյի փոթէ՞նիք: Հիմի Սարփին թուրե՞ փացվեցավ, հեղե՞վ շաղ էրմենի ջանչեցաք, քիչ մէ - քիչ մէ խաբրի գուք անօց հեղն ալ: Ինքերեթին մէջ էնգերնքը բեղաք էրմենիսթանան, Աբհազիսին համաշեցանուն: Հիմի մէջվե՞նիս մէգ վար մէ քուս գու, մեր լիզվիս մերմուշին, թամուշին վարել: Գամաց-զամաց աղա՞վ էմմեն փօն, արաչ լազդին արդին դաղէ՞ չային էրգե՞վան արա՞վ, հեղե՞վ քունին, գօփօն դաղէ՞ արաբէնին արին: Քյալիյէ օթօլ աաք, ձիափի

ինչաք: Հիմի օչ գօր մենաց, օչ ալ դեմօուն արչեթին հարսնիք: Հիմի հարսնիք սալօնին գեմիք, գավալին ու խօրանին դաղէ օրգն ու դանսէ արան, համաշեցու լիզուին դաղն ալ՝ թուրքչան: Աման ա անա մեր լիզուս ալ աշխարիս թմնօղ լիզվե՞նուն բես, ծարիյէ չարթե՞վա՞ծ սարօն բես, ՀԷՍ-է էնգա՞ծ քեդանուն բես թօմնի գու: Մէքթաք չունիք սօրվիք, շաղ չիք՝ քյալիյն ալ, ձիափան ալ խաբրիք: Իսէր հերթեց օչ, թեր ինչու՞ էկ հուրմաթն ալ թօղէլ չէր համաշեց

նակ խաբրուշն ու քիրուշէ: Ի՞նչ խափիմ, ունեց ալ միթքե՞ եզած չէր համաշեցնակ քիրուշէ: Լիզուն թուրքչա էլլօղէ՞ քյաղան շաարէ իշնու անա, խաբրուշէ՞ նազիգանա գու, համաշեցնակ գօնչէլ չի, փօփ գասա, ոթք գասա: Համաշեցին քյաղան ձիափի իշնու անա, համաշեցնակին դաղէ թուրքչան գարնու: Էնթամէ դաղաքէ համաշեցնակ սօրվիլ չէլ գաին, դաղաքէ սօրվին օչ անա, լիզուն ալ մերմուշի գեքի գու: Հիմի գեմիյէ եղի գե՞ն էլլին օչ, մուլիյէս գեդրին օչ դէյի, Թուրքիյին շաարնուքէ աբրօղ համաշեցիքէս մեգդաղվի գուք, խախտի օչ դէյի գեմիյէս, աբրի դէյի մեր լիզուս ալ էմմեն լիզվի բես ինչու՞ աշխարիս էդիսօղէ:

Ես Խոփայի Ուլաքուրեզ գյուղում

եկել: Ես Մակարոյլիներից եմ: Իմ ծնված ժամանակ համաշեցի երեխաները սկզբում Համաշեցի բարբառով էին խոսում, հետո՝ դպրոց գնալու ժամանակ, կամաց-կամաց թուրքերեն էին սովորում: Ես էլ թուրքերենը հինգ-վեց տարեկանից հետո, մեծ մասամբ դպրոցում սովորեցի, դեռ էլի սովորում եմ: Մենք մեր լեզվին համաշեցնակ ենք ասում: Հետո լեզվից, որ մեր լեզուն Հայաստանի լեզվի հետ նույնն է: Էլի լեզվից, որ Աբխազիայում և Ռուսաստանում էլ համաշեցիներ կան, նրանք էլ մեր լեզվով են խոսում, բայց մենք մուսուլման ենք, նրանք՝ քրիստոնյա:

Առաջ մենք չէինք կարող որևէ հայ տեսնել, որ տեսնեինք, թե մեր լեզուն նրանց լեզվին նմա՞ն է: Հիմա Սարփի՞ դուրը բացվեց, հետո շատ հայերի ծանոթա-

Մեր լեզվի մեռնելու ցավը՝ (թարգմանություն)

ցանք, մի քիչ-մի քիչ նրանց հետ էլ խոսում ենք: Համացանցում ընկերներ գտանք Հայաստանից, Աբխազիայի համաշեցիներից: Հիմա մեջներս մի ցավ է այրում՝ մեր լեզվի մեռնելու, վերանալու ցավը: Ամեն ինչ կամաց-կամաց եղավ, առաջ եգիպտացորենի արտի տեղը թեյի պլանտացիան գրավեց, հետո գոմի, կովերի տեղը մեթենամերը գրավեցին: Գյուղերը թողեցինք, քաղաք իջանք: Հիմա ոչ գոր՝ մնաց, ոչ էլ տների առաջ հարսանիք: Հիմա հարսանիքը սրահում ենք անում, սրինգի ու շուրջպարի տեղը էլեկտրական երգեհոնը և արտասահմանյան պարը գրավեցին, համաշեցու լեզվի տեղն էլ՝ թուրքերենը:

Այդպես է, որ մեր լեզուն էլ աշխարհի վերացող լեզուների պես, ծառերը ջարդված սարերի պես, ՀԷԿ-ը՝ ընկած գետերի պես վերանում է: Դպրոց չունենք՝ սովորենք, շատ չենք՝ գյուղում էլ, քաղաքում էլ խոսենք: Սրանք բավական չէին, դեռ մինչև երեկ կառավարությունը չէր թողնում Համաշեցի բարբառով խոսելն ու գրելը: Ի՞նչ խաբեմ, Համաշեցի բարբառով գրելը ոչ մեկի էլ մտքով չէր անցել: Ով թուրքերեն գիտի, որ քաղաք է իջնում, խոսելը քաղաքավարի է դառնում, Համաշեցի բարբառով չի երգում, փոփ է երգում, ոռք է երգում: Համաշեցին, որ գյուղից քաղաք է իջնում, Համաշեցի բարբառի տեղը թուրքերեն է

խոսում: Նման դեպքում՝ երեխաները Համաշեցի բարբառը չեն կարող սովորել. որ երեխաները չսովորեն, լեզուն էլ սկսում է մեռնել: Հիմա, որ ձայներս վերջին ձայն չլինեն, ծուխերս չկտրվեն, Թուրքիայի քաղաքներում ապրող համաշեցիներս հավաքվում ենք, որ ձայներս չխեղդվեն, որ մեր լեզուն ապրի ամեն լեզվի պես մինչև աշխարհի վերջը:

- 1. Բնագրում՝ վար, որը նշանակում է վառող, այրող ցավ:
2. Բնագրում՝ համաշեցնակ, որն այսուհետ թարգմանել ենք Համաշեցի բարբառ:
3. Սարփի գյուղը գտնվում է Վրաստանում՝ Բաթումի մոտ, նախկինում այնտեղ բնակվում

էին նաև կրոնափոխ համաշեցիներ, որոնց 1944թ. Ստալինն աքսորեց Միջին Ասիա: Այժմ Սարփի գյուղի մոտ է գտնվում Թուրքիայի հետ սահմանային անցակետը:
4. Գոր-համագյուղացիներից օգնելու համար խմբովի անվճար աշխատանք, որի ժամանակ հաճախ երգում են:
5. Արդվինի և Ռիզեի նահանգների մի շարք գյուղերի մոտ հիդրոէլեկտրակայաններ՝ ՀԷԿ-եր են կառուցվում: Այդ պատճառով մեծ վնաս է հասցվում այդ վայրերի չքնաղ բնությանը, հատվում են անտառները, գետերի հունը քանդվում ու փոխվում է, ջուրը նվազում է: Այդ ՀԷԿ-երի կառուցման դեռ տեղի բնակչությունը բողոքում է, ցույցեր է կազմակերպում:
6. Բնագրում՝ էնթամէ, որ նշանակում է «այն ժամանակ», նպասակաբարձր գտանք թարգմանել «նման դեպքում»:
Շարունակությունը՝ 7-րդ էջում:

# Վանցիք

**Յէ**ւն գնդեր մէ ունիմ, ան ինձի ասաց իսա հեքիաս: Ունքէ համշէնի ա, ան ալ ջօնիմ էնգեր մէ գունմա, քարտուն դարի յա՝ ջօնչա գու մարթուն, խօսիայի քյադօնուն ջօնի մարթ մէ: Շադ սոյ էնգեր գէլլին յարի հեք: էնգերէ ջօնի մարթ ա, դարէ, մարէ ջօն, ջօնի քյադը նըստի գու:

Մէզ օր մէ իմ էնգերէ ջօնի էնգերօյէ դուննիոս գերթա, էնգերէ դօնէ էլլիլ չի, դարն ու մէձ քուրէ դօնէ գէլլին: էնգերօյէ դարէ ուրէնսուն-ուրէնսունհինգ դարազան գօննա գու: Նըստի գուն, իսթի-ինդի խարիի գուն. արդի վան, քօրիսի վան, հուքունմթի, փանի վան խարիի գուն: Դանձէսթանուն վան, ջօնօնուն վան խարիի գուն, իսփան ա, իման ա, չքիդէ՞ք թա քյադի փօն, իշքէ: Լաֆէ բարնա գու, քուքա վօլ ուսթի էգած ա, քուքա ա թա, ջօն ա թա, քուքա ա թա, էրմէնի ա թա, յեփ մուսլիման աղած ա...

Իմ էնգերէ հալիվօրին հարգէնա գու, գասա թա.

- Դօփար, ջօնօնուն քյադիյէ շադէ ձօվուն մօղի գէլլին, իսա ցեր քյադէս իսիվէր մեր համշէսթանուն քյադօնուն մէջիսեդադէ, սարիս քէլիսին ա, քէզ ինչի՞ ցեր ավալու բարիյէ իսա քյադիս նըստած ին: Իս փօլօր ուսթի՞ էգած ին,- դէյի հարգէնա գու:

Հալիվօրէ գերջի գու անլաթ միշ էնուշի, գասա թա.

- Մեր ավալու բարիյէ իսթի յիյէ հաուր, չօրս հաուր դարի արաչ Վանան էգած ին, մէք վանցի իք,- գասա:- Վանան հեղ վիլ էլլած, էգած ին, սարիսին, լէրունքին, օվանուքին, ջանփէրաքին էգած, իսա դաղէս փօրած ին, իս փօլօր ձօվուն մօղի, էղէթ սար, հարալ հալման ին իս փօլօր ու հօգ դաղէս՝ ջօնօնուն քյադօնուն մօղի՞ սարիս դազէ, նըստած ին: Հեղէվ շադէնցած ին, մօր դընդէր շինած ունիմ, իսա մեր քյադէս անան փօսն էնգած ա: Մեր մէձ բարիյէ ուսթա մարթ գէլլին, մէձ բարթուն մէգէ շադ սոյ չարացք շինէ գուր դէյի, թեր իմի գասթփի, չաղացքի ուստա գէլլի մարթ: Յէն գուղան հերու քյադօնուն, գերթա ան քյադօնուն անա չարացք շինա գու, թաղէնա գու, քուքա: Քանի հաուր դարի անցած ա, թեր «Յեր բարիյէ սոյ չաղացք շինէ գուն»-գասին միլլաթուն մէգի:

- Քէզ խօսիայի քյադօնուն անու շինած չաղացքնուն զօ՞թա,- դէյի հարգէնա գու իմ էնգեր:

- Աղադի գերիին,- գասա հալիվօրէ,- շադ դարի անցած ա, յես իզունէ ինչ ուղուշէս վասմէդի չիմ: Հալիվօրին խարիւնէ թաննի

անա, ախչիգէ գասա թա դարին.

- Բարա, մեր մէձ բարթուն մէգ հարիգին անունէ իք չէ՞ր թա, Դագօփ չէ՞ր թա: Յէս քիչ մէ անան ինչի մէ իմացած ին,- գասա:

Են չադէ հալիվօրէ քիչ մէ գունգի գու, շադ ասուշ ալ ուզէլ չի, անա գանաց-գանաց գասա թա.

- Է՛, հա, անան էր, մեր էմմէնու արաչ իս փօլօր էգօղ բարթուն մէգին անունէ Դագօփ գէլլի,- գասա:

- Դագօփէ ինչի՞ անուն ա, - դէյի էնգերէս հարգէնա գու հալիվօրին:

- Ինչի անուն էլլօղ ա, էրմէնի յա, էրմէնի,- գասա հալիվօրէ:

Մագա, մարթուն ավալու բարիյէ վանցի էրմէնի գէլլին, էգած, խօսիայի ջօնօնուն քյադօնուն մօղէ նըստած ին, անդաղ արբուշի գէրած ին, դաղաքէ մէձէնցած, ջօնօնուն դաղօցէ հեղէ ջօնի լիզուն սօրված ին, ջօնօնուն հեղէ գարթէված ին, գանաց-գանաց ջօն թարցած ին: Անուննին ա բարի արաչ Դագօփանուն Արօփօղլի, Յաքուփօղլի աղալ, հեղէվ մուսլիման աղան, անան, անան մօլիյեցան (մօլեդցան), հեղէվ ալ սօյադ գանունէ էլլալ, արին թուրքի սօյանուն, անցալ քէնաց:

Ենգերէս քանի մէ օր հեղէվ ունի էնգերին դէնու անա, գասա թա.

- Ան օրէ ցեր դունէ էգի, քու դարիին հեղէ խարթեքա, ինչէ՞ր սօրվեցա, ինչէ՞ր: Մէք քէզի էնգեր քիդաքի, թուն մագա մէգի ախար էլար,- ասթած ունի, իսփօն իքէն իսփօն ա, քու դարէ անլաթ միշ ասալ,- գասա:

Ենգերն ա ասթած ունի թա.

- Հա, անան ա, յես ալ մօր սօրված ին, մէգ- էրգու անիս ա,- ասթած ունի,- իմ դարէ մէգի, գաթէ, ասթած չունիր վանցի էրմէնի էլլուշնիյէ:

Վանան էգօղ մարթ շադ գօ, հարալդա, Մէվ ձօվուն սեմթսիյուս, հիմի-հիմի փօսէ քէնգի: Խօսիայի մարթաքուն մէգին մէգ մօսլիմ մէ գար, սօյանուն Վանի էր. մէքթիս ա՛ ինչէս չաչիք սօյանուն ա դէյի դուշունմիշ աղած է: Մօսլիմնէ ջօնի քյադօնուն էր, ջօնի մարթ էր: Հեղէվ, հիմի, էդիսօղունաքէս իմացի թա անէր ալ Վանան հեղ էգած ին: Ալ չքիդիմ, վօր միլլաթ ին: Վանօվ գէքօղ սօյանուննիյէ շադէ էրմէնէսթանուն սօյանունուն էլմանի գուն:

Մէմ ալ մէգ մուսլիմնէ մարթ մէ գօ էրգէնի, գէնչ մարթ մէն ա, սօյ մարթ ա, անունէ Յաշար Քուրթ ա, Արթօ Թունօքոյաշյանին հեղ ալբուն շինեց, իմացի թա, ան ալ հիմի սօրված ա թա, անու բարթուն ալ Վանան էգած ին:

Վանան ջանփա աղած ա Մէվ ձօվսիյուս, է՛, համշէնիք ալ Վանան էգած ին, գասթփի յա...

1. Ասացող տարբեր պատճառներով չցանկացալ, որ իրապարակվեն այս պատմության մեջ հիշատակվող անձանց և գյուղի անունները:
2. Ասացողի հայրենի Ուշքարդէ, Քեմալիաշա (Մաքրիյալ) և այլ գյուղերում լազ ազգի ներկայացուցիչներին անվանում են ջօն, իսկ խփա քաղաքում և մի շարք գյուղերում ասում են ջան: Հայկական աղբյուրներում լազերը կոչվում էին ջան, իսկ լեզուն՝ ճաներեն:

հարցնում է:  
Հալիվօրը սկսում է բացատրել, ասում է, թե.

- Մեր ապուպապերը այստեղ երեք հարյուր, չորս հարյուր տարի առաջ Վանից են եկել, մենք վանցի ենք,- ասում է:- Վանից վեր են կացել, եկել են, սարերով, յայլաներով, հովիտներով, ճանապարհներով եկել, հասել են այստեղ, այս կողմը ծովին մոտիկ է, հետևում սար, հավանաբար հավանել են այս կողմն ու այստեղ լազերի գյուղերի մոտ՝ սարի տակ, բնակվել են: Հետո շատացել են, մոր տներ են շինել, մեր այս գյուղը այդպես է ի հայտ եկել: Մեր մեծ պապերը վարպետ մարդ

# Վանցիները (թարգմանություն)

**Ես** մի ընկեր ունեմ, նա ինձ պատմեց այս պատմությունը: Ինքը համշէնի է, նա էլ մի լազ ընկեր է ունեցում, քառասուն տարի է՝ ճանաչում է մարդուն, խփայի գյուղերից մի լազ է: Իրար հետ շատ լավ ընկեր են լինում: Ընկերը լազ մարդ է, հայրը, մայրը՝ լազ, լազի գյուղում են բնակվում:

Մի օր իմ ընկերը լազ ընկերոջ տուն է գնում, ընկերը տանը չի լինում, հայրն ու մեծ քույրն են տանը լինում: Ընկերոջ հայրը ուսուն-ուսունհինգ տարեկան է լինում: Նստում են, այստեղից-այնտեղից զրուցում են. արտի մասին, հող մշակելու մասին, կառա-



վարության, բանի մասին զրուցում են: Ուրեմն համշէնցիների մասին, լազերի մասին են խոսում, այսպես է, այնպես է, չգիտե՞ք գյուղի բանը: Չորսը դառնում է, գալիս է. ով որտեղից է եկել, թո՛ւրք է, լա՞զ է, քո՞ւրդ է, հա՞յ է, երբ է մուսուլման դարձել...

Իմ ընկերը հալիվօրին հարցնում է, ասում է.

- Հորեդբայր, լազերի գյուղերից շատերը ծովին մոտիկ են լինում, ձեր այս գյուղը դեպի վեր՝ մեր համշէնցիների գյուղերի մեջտեղում, սարի գլխին է, տեսնես ինչու՞ են ձեր ապուպապերը այս գյուղում բնակություն հաստատել: Այս կողմ որտեղի՞ց են եկել,-

են լինում, մեծ պապերից մեկը շատ լավ ջրաղաց էր շինում, դեռ հիմա էլ ասվում է, մարդը ջրաղացի վարպետ է լինում: Հետո գյուղերից կանչում են, գնում է այն գյուղերի համար ջրաղաց է շինում, աշխատեցնում է, գալիս է: Քանի հարյուր տարի է անցել, դեռ «Ձեր պապերը լավ ջրաղաց են շինում»- ասում են մարդիկ մեզ:

- Տեսնես խփայի գյուղերում նրա շինած ջրաղացներից կա՞ն, - հարցնում է իմ ընկերը:

- Այդքանը չգիտեմ,- ասում է հալիվօրը,- շատ տարի է անցել, ես երեկոյան ինչ կերածս չեմ հիշում:

Հալիվօրի զրույցը որ ավարտվում է, աղջիկն ասում է հորը.

- Հայրիկ, մեր մեծ պապերից մեկի անունը բան չէ՞ր, Հակոբ չէ՞ր: Ես ոնց որ այդպիսի մի բան եմ լսել,- ասում է:

Այն ժամանակ հալիվօրը մի քիչ կանգ է առնում, շատ ասել էլ չի ուզում, բայց կամաց- կամաց ասում է թե.

- Է՛, հա, այդպես էր, անեմից առաջ այս կողմ եկող մեր պապերից մեկի անունը Հակոբ է լինում,- ասում է:

- Հակոբն ի՞նչ անուն է,- ընկերս հարցնում է հալիվօրին:

- Ինչ անուն է, հայի է, հայի,- ասում է հալիվօրը:

Ուրեմն, մարդու ապուպապերը վանցի հայ են լինում, եկել, խփայի լազերի գյուղերի մոտ բնակվել են, այնտեղ սկսել են ապրել, երեխաները մեծացել, լազերի երեխաների հետ լազերի լեզուն են սովորել, լազերի հետ անունացել են, կամաց-կամաց լազ են դարձել: Անուններն էլ երկի նախկին Հակոբյանից Արփօղլի, Յաքուփօղլի դարձալ, հետո մուսուլման եղան, այդպես, այդպես մոռացան, հետո էլ ազգանունի օրենքը՝ եղալ, վերցրին թուրքի ազգանուն, անցալ գնաց: Ընկերս մի քանի օր հետո իր ընկերոջը որ տեսնում է, ասում է թե.

- Այն օրը ձեր տուն եկա, քո հոր հետ զրուցեցիք, ինչե՞ր իմացա, ինչե՞ր: Մենք թեք ընկեր գիտեցիք, պարզվում է դու մեզ եղբայր եղար,- ասել է, այսպես-այսպես է, քո հայրը պարզաբանեց,- ասում է:

Ընկերն էլ ասել է թե.

- Հա, այդպես է, ես էլ մոր եմ իմացել, մեկ-երկու ամիս է,- ասել է,- իմ հայրը մեզ չէր էլ ասել վանցի հայ լինելներս:

Հավանաբար Սև ծովի կողմում Վանից եկող շատ մարդ կա, մոր-մոր հայտնի է դառնում: Խփայի դպրոցներից մեկում մի ուսուցիչ կար, ազգանունը Վանի էր. հիշում եմ, որ մտածմունքի մեջ էի ընկել, թե ինչ տեսակի ազգանուն է: Ուսուցիչը լազի գյուղերից էր, լազ մարդ էր: Հետո, հիմա, վերջերս լսեցի, թե նրանք էլ Վանից են եկել: Էլ չգիտեմ, որ ազգից են: Վանով սկսվող ազգանուններից շատը Հայաստանի ազգանունների նման են:

Մեկ էլ մի երգեցի՞ք երաժիշտ մարդ կա, երիտասարդ մարդ է, լավ մարդ է, անունը Յաշար Քուրթ է, Արտո Թունօքոյաշյանի հետ ալբոմ պատրաստեց, լսեցի որ նա էլ է հիմա իմացել, որ նրա պապերն էլ Վանից են եկել:

Վանից Սև ծով ճանապարհ է եղել, ասվում է՝ համշէնցիներն էլ Վանից են եկել:

1. Նկատի ունի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1934թ. հունիսի 21-ին ընդունած «Ազգանունի մասին» օրենքը, ըստ որի թուրքացվեցին Թուրքիայի Հանրապետության բաղաբաղիների ազգանունները:
2. Ռիզեի այն բնակիչներին, որոնք լազ, համշէնցի կամ հույն չեն, համշէնցիներն անվանում են էրգեցի, այսինքն՝ ռիզեցի:

# Քուրու

**Ք**ուրուն աշխարհս մեզալ միլլաթնուն հեքիյանուն մէջէ ավէր ջինջուլիս ա: Քուրուն ունի հազվիթէ գերթա ուուշ ջինջուլանուն փունին հաճա գու, ան փունին մէջ գինա գու հազվիթէ ջինջուլանուն դագ: Օրէ քուքա, հազվիթին մէջէ քուքուին ցաքէ մէձնա, փօսէ քընգի, մեզալ ջինջուլանուն ցաքուն հեղ հազվիթան քէլլա: Մեզալ ցաքուն մարէ անու ալ ունի ցաքէ քիդանա գու, փուր գէնա, գուղէնա, մեձնցընա գու: Հեղէվ քուքուին ցաքէ մեզալ ցաքուն քէլլա ինուշի գերջի գու, անօց գուրթա, ցէնձա գու, փունան վար ցքա գու: Քէլ ջինջուլիս ա քուքուն:

թէնուն թօրիսուշին օխթէ քուքա, թօրիսի գօր, քայնի գօր զընես, շարվի գուն ախչէթնիյէ, գօնչի գուն, դալիքանիլը օղնուքնան խէխէնջա գուն: Արդիյէ հերգէ գուս, աճուքնիյէ փօէ գուս, ցան զընես, գօվիյէ, հօրթիյէ քունան հօնէ գուս, փօսիյէ թրչարդի գուն: Էլըն ի վեր էրթուշին օխթէ մօղգինա գու, փօն էնուշին ցէնն ու գօնչուշին ցէնը գօվօն, հօրթուն, ջինջէլիվէնուն ցէնուն խարվի գու: Քուքուին ցէնը վօյին սելվան միթը փէյա գու, վօյին՝ օնցած վարիյէ: Քուքուն քա ու գօնչա անա, քանուն քուքա աշխարես, քիդէս թա գօրէ, վարէ, ցուրդէ, սեֆիլլուղէ յեղ մէնա գուն, մարթու մէջ շօղնա գու, մարթ ումուղ գուննա էգօղ օրան: Ան անա մէք քուքուին ան օնդր, ան քէթնալ ցէնը հազ զընիք: Հերու շարարուքէ արթօղնիս արիլին մէջ քյաղն ի վեր թէլէթօն էնիք

անա, մէքուփ քէյիք անա, հարցէնի գուք. «Քուքուն գօնչէ՞ք թա» դէյի: Ռահմէլի իմ մարօվէ 2004 դարին արիլին սեֆթաին խարիւշիս, յես հարցնէլու ունիք սսթած ունի ինձի. «Թէր քուքուն գօնչէք օչ» դէյի: Իրիլէ հանէլու մերալ իմ մարէ: Մաքրիյալ՝ ձօվուն ջօթին մագալուղին խօղէ թիյաք, հեղէվ մագալուղին վան իմացի քուքուին ցէնը: Քադիդիցան էլէլ բէթնալ ցէնը, վեզալի ցալիս էնգած քէլօխես, փուր այի օղն ի վեր.

- Յէ մա,- ասթի արդեցուքէ վաթէլօվ,- քուքուն գօնչէք, թուն վօրդա՞լիս էս:

Արթուն ու մերնուշէ յարի հեղ ա քուքուին հեքիյան, վօրդա՞լ արթունէ թաննի գու, վօրդա՞լ մերնուշէ գերջի գու, խարն ա, մեզին մերնուշէ մեզալին արթուն ա...

Քուքուին վան մեզ քէլ փօն մալ քիդիք՝ մերնուշի փօն. քուքուին ցէնը քիմա-

նաս, անա ունի դէնուլ չէլ գատ:

- Քուքու, քուքու, քուքու, քուքու,- դէյի գօնչա գու ցախուղին մէշնան: Յէնը ուստի՞ քուքա, քիդանալ չէս, իսթի՞ թա քուքա, ինդի՞ թա քուքա, մէքէվա՞նց թա քուքա, վերէվա՞նց թա քուքա, օղնա՞ն թա քուքա, փօսա՞ն թա քուքա:

Բիճիգուրինէն էնգերոյացիյօվէս խաղալէ էնդէնի դադօցման մեզէ գունգի, օնգուլ թէնէ գուր.

- Խօսի միք, հալա, թաքիդուն քուքուն գօնչա գու,- գասէր: Օնգուլ թընա գուքի յարի հեղ: Հեղէվ քուքուին ցէնը քիմանաքի հերվանցնա.

- Քուքու, քուքու, քուքու, քուքու...

- Վօրդա՞լ գօնչա գու...

- Ահա՛, իսթի գօնչա գու,- գասէր դադօցման մեզէ՝ թէվը էրգեցէնէր, մադօվը ցուցնէլօվ:

Էնթանէ մէք անու գասաքի թա, մադէլ խաճա, հեղէվ ալ օքթիկէր դազէ աջդար:

**Շարունակությունը՝ 8-րդ էջում:**

Աղիքը՝ 7-րդ էջում:

Մէք աման իմացած ու սորված իք, քուքուին մաղդ դեմքէլով վորդաղ գոնչա գու դէյի, դէտեցնուչէ շաղ քէշ ա: Թա աման դէտեցնես քուքուն, քուքուն թուրքէշէ (չքիդիմ ինչի թուրքէշէ գասաքի իսա խաբարես) գասա թա. «Պիդէյիմ դա գէլէյիմ, սունգուլունի գյօրէյիմ», գասա. «Աս դարի էրթամ, քալ դարի քամ անա, մերած էլլիս, մազալուղիդ քէլիսիմ դեմքէլած լախթիմ փաղէ դեսունում»:

Ան ամա, մէգ դաղ մէ. «Քուքուն հօզա գոնչա գու» դէյի մադօվէ դէտեցնես անա, քէշ փօն ա ան, մաղդ փիյանէդ գարնուս, արգէնուդ դազէ սուր մէ խածէ գուս, վարտցնէ գուս, անդի հեղէլ ալ մաղդ օթքիմէդ դազէ աջէնէ գուս, անդաղ ալ վարտցնես, ցավէցնէ գուս քի, քէշուքիմէ փերնա օշ, մերնիս օշ ու աքրիս դէյի: Յէս ալ իմ թիծաղութիմս քուքուն մադօվէս դէտեցնած ունիմ, մաղդ խածած ու օթքիմէս դազէ աջէնած ունիմ:



սկսում է մյուս ծագերին վատություն անել, նրանց խփում է, կտցահարում է, բնից վայր է գցում: Վատ թռչում է կկուն:

Մեր՝ համաձեռնարկի համար, կկուն մեկ ուրիշ բան էլ ունի, մի իմաստ, մի պատմություն ունի: Կկուն ապրիլի վերջին չլինի, մայիսի սկզբին հայտնվում է ու այն անպետք ծայրով կանչում է: Կկուն որ կանչում է, համաձեռնարկ աշխարհը արթնանում է, եղանակը տաքանում է, հող մշակելու, եզիպատացորեն, լոթի, դրում ցանելու ժամանակը գալիս է, հող մշակելու գործ, քաղհանի գործ են անում, աղջիկները շարվում են, երգում են, երիտասարդները բլուրներից խրխնջում են: Արտերը հերկում են, բանջարանոցները փորում են, ցանում են, կովերը, հորթերը գոմից հանում են, հարթավայրում թռչկոտում են: Յայլա գնալու ժամանակը մոտե-

նում է, գործ անելու ծայրն ու երգի ծայրը կովերի, հորթերի, թռչունների ծայրերին են խառնվում: Կկվի ծայրը որին սիրածին է միտքը բերում, որին՝ անցած ցավերը: Կկուն որ գա ու կանչի, աշխարհիս գարուն է գալիս, կարծես թե դժվարությունը, ցուրտը, աղքատությունը հետևում մնացին, մարդու մեջը տաքանում է, մարդ եկող օրվա հանդես հույս է ունենում: Դրա համար մենք կկվի այն անտեր, այն անպետք ծայրը սիրում ենք: Յեռու քաղաքներում ապրողներս ապրիլի մեջ, որ գյուղ գանգենք, որ նամակ գրենք, հարցնում ենք. «Կկուն կանչէ՞ց»: Իմ ողորմած մոր հետ 2004 թվի ապրիլի սկզբին խոսելիս, առանց իմ հարցնելու՝ ինքն ասաց ինձ. «Դեռ կկուն չի կանչել»: Ապրիլը չհանած իմ մայրը մահացավ: Մաքրիյալում՝ ծովի մոտ, գերեզմանոցում, հողը

դրեցինք, հետո գերեզմանոցում լսեցի կկվի ծայրը: Քաղիդից՝ եկավ անտեր ծայրը, բարձրացրեցի կախ ընկած գլուխս, նայեցի բլուրն ի վեր.

- Մայրիկ,- ասացի արտասուք թափելով,- կկուն կանչեց, դու որտե՞ղ ես:

Կկվի պատմության մեջ ապրելն ու մեռնելը իրար հետ են, որտե՞ղ է ապրելն ավարտվում, որտե՞ղ է սկսվում մեռնելը, խառն է, մեկի մեռնելը մյուսի ապրելն է...

Կկվի մասին մի վատ բան էլ գիտենք՝ մեռնելու մասին բան. կկվի ծայրը լսում են, բայց իրեն չեն կարող տեսնել:

- Կո՛ւ- կո՛ւ, կո՛ւ- կո՛ւ, կո՛ւ- կո՛ւ,- կանչում է անտառի միջից: Ծայրը որտեղի՞ց է գալիս, չեն հասկանում, այստեղի՞ց է գալիս, այնտեղի՞ց է գալիս, ներքևի՞ց է գալիս, վերևի՞ց է գալիս, բլրի՞ց է գալիս, հարթավայրի՞ց է գալիս:

Փոքր ժամանակ ընկերներով խաղալիս հանկարծ երեխաներից մեկը կանգնում, ականջ էր դնում.

- Յալա մի՛ խոսեք, կարծես կկուն կանչում է,- ասում էր: Իրար հետ ականջ էինք դնում: Յետո կկվի ծայրը հեռվից էինք լսում:

- Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ...

- Որտե՞ղ է կանչում...

- Սիա՛, այստեղ է կանչում,- ասում էր տղաներից մեկը՝ ձեռքը երկարացնելով, մատով ցույց տալով:

Այն ժամանակ մենք նրան ասում էինք՝ «Մատդ կօժ, հետո էլ ոտքիդ տակ տորոկ»:

Կելով ցույց տալը շատ վատ է: Թե կկվին այդպես ցույց տաս, կկուն թուրքերեն (չգիտեմ ինչո՞ւ էինք այս խոսքերը թուրքերեն ասում) ասում է թե. «Պիդէյիմ դա գէլէյիմ, սունգուլունի գյօրէյիմ», ասում է. «Այս տարի գնամ, եկող տարի որ գամ, մեռած լինես, գերեզմանիդ գլխիմ տնկված լախթի փայտը՞ տեսնեմ»:

Դրա համար, մի տեղ, որ մատով ցույց տաս՝ «Կկուն այստեղ է կանչում», դա վատ բան է. մատդ բերանդ են առնում, ատամներիդ տակ ամուր կծում են, մղկտացնում են, դրանից հետո էլ մատդ ոտքիդ տակ տորոկում են, այնտեղ էլ մրմռացնում, ցավեցնում են, որ վատությունը չբռնի, չմեռնես և ապրես: Ես էլ իմ փոքր ժամանակ կկվին մատով ցույց են տվել, մատս կօժել ու ոտքիս տակ տորոկել են:

1. Գոր-համագյուղացիների օգնելու համար անվճար խմբով աշխատանք, որի ընթացքում հաճախ երգում են:

2. Խրխնջում են-խոփայի գավառի համաձեռնարկի, հատկապես երիտասարդների շրջանում տարածված է յայլաներում, բնության գրկում, խմբով քայլելիս, կամ շուրջապարի ժամանակ որպես ուրախության արտահայտություն խրխնջողի նմանվող բարձր ծայրեր արձակելը:

3. Քաղիդի-Քեմալիպաշա (Մաքրիյալ) գյուղի մոտ, անտառածածկ, բարձր բլուր է, որի գլխին մեծ քար կա, այդտեղից էլ ծագել է լազերեն անվանումը՝ քվա-քար, դիդի-մեծ:

4. Լախթի փայտ-մահմեդականների մոր գերեզմանների գլխի կողմում ուղղահայաց դրվող տախտակ, որը մնում է մինչև գերեզմանի բարդ ղեկը:

Փերի

Փերին՝ նիյազէ գէվմա գէնչ մարթօցէ, դալիքանլի դադօցէ: Երանդ, մօնանցած, լուսած ախչօզ ա, սօյ շէյի հաքած գունձ, ալթունօվ, փարփալօվ սուսնէված գէլլի: Մարթ դեսնու անա, փերիին էրանդութիման աչվէնիմ քյօրնա գուն, շիդազ: Մարթու խէրքէ քէլխան գարնու: Փերին քիշէրէ դալիքանլի դադօցէ, մարթօցէ նիյազէ մէդնու գու, անօց գանդուրմիշ գէնա.

- Այ էրթաք, քէզի հեդ գարթէվօղ ում,- գասա,- այէ՛, այէ՛, այէ՛...

Փերիին էրանդութիման խէրքէ քէլխանուն գերթա մարթօցէ, վօ՞ր մարթ էրթալ չի աման էրանդին հեդ: Դալիքանլի դադաքէ, մարթիքէ վիյ էլլան, փերիին հեդը էրթան անա, փերին անօց դանի գու փերիմօուն աշխարհիյուս: Անդաղ հարսնիք, գօնչուշ, խաղուշ, աշխարես չարթէվի գու: Մարթէ աս աշխարաս, շիդազ աշխարաս քէլլա, խէրքէ քէլխան գերթա: Յեղէվ, հաքվան գարթի ու վիյ էլլա անա, շաշ-շաշ խաքրա գու, գասա թա՝ յես գարթէվէցա, յես իսպան աղա, յես իման աղա, շաշ-շաշ խաքրա գու մարթէ: Ենթամէ գասին թա, մարթուս «Փերին չարփմիշ աղած ունի»:

Բազի փերիին հեթիյանօուն մէջ յա մարթէ սարին, մալին հեդ մէնէնազ գէլլի, քիշէրէ քունիմ մէջ չաղացան վիյ էլլա գերթա փերիին հեդ, յա փերիին էրթիյան էրթալէ, յա փերիմօուն աշխարին խօրան խաղալէ, խէչի գու, քէլօխէ քարէ գուրթա, գարթի գու անա, փուք գէնա անա, չաղացան հիսուն-վաքուն մէթօ հերու էնգած գէլլի: Բազի ալ դօնէ մէնէնազ գէլլի մարթէ, փերին լուսնիքայի բես էրանդ քուքա, փանջարային արչէվէ չարազդի գու դալիքանլէցէ օդանիյուս, քէթէթաս-

նա գու փանջարան.

- Այէ՛, էրթաք,- գասա:

Վեր քէլլա դաղան, գերթա փերիին հեդ, դօնէ վերթին թունբն ի վար քիլի գու:

Ավալէ հիմիգու բես շէյրան չքար, քյաղնուքէ մեդողուն գէլլէր, մեր իսա փօլօրես դէմերն ալ յասցան հերու ին, հինգ-վեց դուն հօզա, դասէ դուն էնթին՝ էրանդիյէք հաուր մէթօ հերու: Յամշէցու քյադէրն ալ բիթուն քեդանուն ափնուքն ին: Մեզ մաալլէցան մեգալ մաալլանիյուս էրթալէ-քալէ, յա խօնծօղօք մէ ափվէնուն գարնէն, յա մարիս քօլէ գուն թա, քիչ մէ լուս էլլի դէյի: Շաղմ ալ, գաթէ, ինչիզ ափվէնին արնէլ չէն: Փօղօցվեդիքնիմէ շէվալէլօվ, յեդ աշէլօվ, վախէլօվ գերթան-քուքան քիշէրէ յաար դէմերնիյուս:

«Իշէ ան օխթունաքէ քիշէրէ մեդողուն ին, էրթալ-քալէ թյուրլի չաշիք շէր դեսնա գուրթ»- գասին ավալու մարթիքէ, գընդիքէ: Վօտ «Ջամփուն վանան քօլէ գարք, օթքիյէ թարս մարթ՝ ջին դեսա» - գասա, վօտ «Ուլ դեսա, արի օնթես, դարի քունէ քէլի անա, մերած մարթ թարցալ»- գասա, վօտ «Օղէ թարցա անա, քեդափանէ՛ չախթրանէ հարսնիքէ չարթէվի գուր, խօրան-խօրան, գօնչուշ-գօնչուշ, լուսացած էր աշխարես, փերիինիէ հարսնիք գէնէնի», - գասա...

Գասթէվի որ գասթէվի: Յիմի էնմէն դաղ շէյրան էլէվ, օշ ջին մէնաց, օշ փերի մեր աշխարիս, հիմի անէր վօ՞ր մեդողուն աշխարին վօ՞ր լիզվօվ ուն ցէն գուրան, վօ՞ր միլլաթի խօրան խաղա գուն ու գօնչի գուն, վօ՞վ քիդա:

1. Խոփայի գավառի համաձեռնարկի շրջանում տարածված է նաև փերի ձևը, որը հատուկ է ծագումով արդալացիների կամ նրանց հետ հարևանությամբ ապրողներին:

Փերի

(Քարգանություն)

Փերին երագուն է երևում երիտասարդ մարդկանց, պատանի տղաների: Երևակայությունից այն կողմ, գեղեցիկ, լուսավոր աղջիկ է, լավ շորեր է հագած լինում, ոսկով, փայլվում գարդերով գարդարված է լինում: Մարդ որ տեսնի, փերիի գեղեցկությունից աչքերն, իսկապես, կկուրաման: Մարդու խելքը գլխից կառնի: Փերին գիշերը պատանի տղաների, մարդկանց երագն է մտնում, նրանց համոզում է.

- Արի գնանք, քեզ հետ ամուսնանալու են,- ասում է,- արի՛, արի՛, արի՛...

Փերիի գեղեցկությունից մարդկանց խելքը գլուխներից գնում է, ո՞ր մարդը նման գեղեցիկի հետ չի գնա: Դատանի տղաները, մարդիկ, որ վեր կենան, փերիի հետ գնան, փերին նրանց տանում է փերիների աշխարհը: Այնտեղ հարսանիք, երգել, պարել, աշխարհը թնդում է: Մարդն այս աշխարհից, իրական աշխարհից ելնում է, խելքը գլխից գնում է: Յետո, առավոտյան որ գարթնի ու վեր ելնի, հիմար-հիմար խոսում է, ասում է, թե են ամուսնացա, են այսպես եղա, են այնպես եղա, հիմար-հիմար խոսում է մարդը: Այն ժամանակ ասում են թե մարդուն «Փերին խփել է»:

Երբեմն փերիների պատմությունների մեջ կան մարդն իր տավարի հետ սարում մենակ է լինում, գիշերը քնի մեջ ջրաղացից վեր է կենում, գնում փերիի հետ կան փերիի հետևից գնալիս կան փերիների աշխարհում շուրջապար պարելիս ընկնում է, գլուխը քարին է խփում, որ գարթնում է, որ նայում է, ջրաղացից հիսուն-վաքուն մետր հեռու ընկած է լինում: Երբեմն էլ մարդը տանը մենակ է լինում, փերին լուս-

նի նման գեղեցիկ գալիս է, պատուհանի առջև ճառագում է դեպի պատանիների սենյակը, պատուհանը կտկտացնում է.

- Արի՛, գնանք,- ասում է:

Տղան վեր է ելնում, գնում է փերիի հետ, տան վերը թմբից գլորվում է:

Յնուն հիմիկվա պես էլեկտրականություն չկար, գյուղերում մուք էր լինում, մեր այս կողմի տներն էլ իրարից հեռու էին, հինգ-վեց տուն այստեղ, տասը տուն այնտեղ՝ երկու-երեք հարյուր մետր հեռու: Յամշէցու գյուղերն էլ բոլորը գետերի ափերին էին: Մի թաղից մյուս թաղ գնալ-գալիս կամ ձեռքը մի փայտափայլ էին վերցնում, կամ մարիս էին վառում, որ մի քիչ լույս լինի: Շատերն էլ, դե, ձեռքերը ոչինչ չէին վերցնում: Գետափնյա ճանապարհների շվարելով, հետ նայելով, վախենալով գիշերն իրար տուն էին գնում-գալիս:

«Ուրեմն այն ժամանակ գիշերները մուք էին, գնալիս-գալիս գանազան տարբեր բաներ էինք տեսնում», - ասում են հին մարդիկ, կանայք: Որն ասում է՝ «Ճանապարհի վրա, հասակը կարճ, ոտքերը շրջված մարդ՝ ջին տեսա», որն ասում է՝ «Ուլ տեսա, գիրկս վերցրի, որ տարա գոնը դրեցի, մեռած մարդ դարձավ», որն ասում է՝ «Բլուրն անցա, գետափին՝ ջրաղացի դռանը հարսանիք էր թնդում, պար ու պար, երգ ու երգ, աշխարհը լուսավորվել էր, փերիները հարսանիք էին անում»:

Ասվում ու ասվում էր: Յիմա ամեն տեղ էլեկտրականություն եկավ, մեր աշխարհում ո՛չ ջին մնաց, ո՛չ փերի, հիմա նրանք ո՞ր մուք աշխարհում, ո՞ր լեզվով են կանչում, ո՞ր ժողովրդի պար են պարում ու երգում, ո՞վ գիտի:

1. Բնագրում՝ «չարթէվի գու», որ բառացի նշանակում է «ջարդվում է», նպատակահարմար գտանք թարգմանել «թնդում է»:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քարեգործական հասարակական կազմակերպություն: Յայլան՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Գեղամիստ՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքերման դեպքում հղումը՝ «Չայն համաձեռնակմին» պարտադիր է: Յրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org